

ԳԼՈՒԲԱԼ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՊԱԳԱՆ

Սուրեն Սարյան

Վերջին տասնամյակում շատ է խոսվել գլոբալ քաղաքականության միասնականացման գործընթացի մասին, եւ այս տարվա գարնանը նման զարգացումները կարծես թե ձեռք բերեցին արագացված բնույթ: Սակայն սխալ է խոսել մեկ գլոբալ կամ գլոբալացման գործընթացի մասին, այսօր աշխարհում գոյություն ունեն մի քանի գլոբալ նախագծեր, որոնց իրականացումն իսկապես մտել է ակտիվ փուլ՝ հատկապես 2011 թվականից սկսած:

Պատմության մեջ եղել են, մեծ հաշվով, երեք գլոբալ նախագծեր՝ Քրիստոնեություն, Իսլամ եւ Կոմունիզմ: Կոմունիզմն անկում ապրեց՝ ինչպես դա եղավ Ռուսաստանում եւ Արեւելյան Եվրոպայում, կամ էլ արմատապես վերափոխվեց՝ Չինաստանի պարագայում: Իսլամական նախագիծը, սկզբում «ահաբեկչության դեմ պատերազմի», իսկ այսօր՝ Մեծ Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող հեղափոխությունների հետեւանքով մտել է բարդ փուլ: Իսկ Քրիստոնեությունը հիմնականում վերածվեց երկու ճյուղավորումների, որոնք ի հայտ եկան որպես Արեւմտյան նախագիծ. բողոքական-ազատական՝ ի դեմս ԱՄՆ-ի, եւ բողոքական-կաթոլիկ՝ ի դեմս ԵՄ-ի:

Գլոբալ նախագծի իրականացման համար անհրաժեշտ է նաեւ հենակետային երկրի առկայություն: Այդպիսի դեր էին, օրինակ, կատարում Զոռն ու Բյուզանդիան՝ Քրիստոնեության, ապա՝ Արաբական խալիֆայությունը եւ Օսմանյան կայսրությունը՝ Իսլամի, Ռուսաստանը (ԽՍՀՄ)՝ Կոմունիզմի, Մեծ Բրիտանիան ու ԱՄՆ-ը՝ Արեւմտյան նախագծերի համար: Այդ տերությունները ստեղծում էին անվտանգության շրջանակային կառուցվածքներ, որոնք անհրաժեշտ էին շուկաների, առետրի եւ կապիտալների տեղաշարժի պաշտպանության համար:

Նման հենարանի պարագայում ցանկացած գլոբալ նախագիծ դառնում է մեկ կենտրոնից կառավարելի եւ ունի ծավալման միտում: Այսպես, Չինաստանը եւ Զնդկաստանը չեն կարող դիտվել որպես հենակետային երկրներ, քանի որ չունեն գլոբալ գաղափարախոսություն՝ աշխարհով մեկ տարածելու համար. նրանց քաղաքակրթությունները միշտ եղել են ինքնամփոփ, իսկ օտար գաղափարներ նրանք չեն ընկալում՝ ունենալով հզոր մշակութային կոդեր:

Պատմական փորձը հուշում է, որ ժամանակի ընթացքում գլոբալ նախագծերի կողմերը սկսում են կորցնել իրենց դիրքերը կամ անկում ապրել, ինչը, սակայն, իրենք ցանկություն չունեն ճանաչելու, քանի որ դա կզրկի նրանց իրենց հիմքից, իսկ գնալ վճռական փոփոխությունների նրանք եւս չեն ձգտում, որովհետեւ դա կհանգեցնի իրենց կողմից տարվող խաղի կանոնների փոփոխությանը: Նման օրինաչափությամբ տեղի ունեցան Հոնոլուլուի եւ Բյուրգանդիայի, Արաբական խալիֆայության եւ Խորհրդային կայսրության անկումները, երբ այդ տերությունների վերնախավերի անկարողությունների պատճառով վերոնշյալ գլոբալ նախագծերի փլուզումը դարձավ անխուսափելի:

Այս առումով ԱՄՆ-ը, իրոք, համաշխարհային պատմության վերջին գերտերությունն է, քանի որ դասական կայսերական մոդելը, այսինքն՝ պետությունների քաղաքական, տնտեսական եւ գաղափարախոսական ընդարձակումը փոխարինվում է միջազգային կապերի, այդ թվում՝ տարբեր քաղաքակրթությունների մակարդակով ցանցային համակարգերի մոդելով, որի լավագույն վկայությունն է ԵՄ-ը: Դա կարող է նշանակել, որ եթե նախկինում Արեւմտյան նախագիծն ուղղորդվում էր մեկ կենտրոնից՝ Վատիկանից, Մեծ Բրիտանիայից, հետո՝ ԱՄՆ-ից, ապա այսօր այդպիսի կենտրոնները դառնում են բազմազան. այսօր նույն հաջողությամբ գլոբալ նախագիծը հնարավոր կլինի համակարգել Բրյուսելից, Ստամբուլից, Շանհայից կամ Մումբայից:

Միեւնույն ժամանակ, խոսվում է ոչ թե երկբեւեռ կամ բազմաբեւեռ, այլ անբեւեռ աշխարհի առաջացման հնարավորության մասին: Այդ աշխարհում ուժը եւ հզորությունը փոշիանալու են բազմաթիվ պետական եւ ոչ պետական խաղացողների միջեւ: Նման աշխարհակարգը մեծացնելու է այնպիսի խաղացողների ազդեցությունը, ինչպիսին են Չինաստանը, Հնդկաստանը, Բրազիլիան: Սակայն նրանց կողմից եւս չի դրսևորվում ցանկություն՝ ձեւավորել կամ ուղղորդել համաշխարհային քաղաքականությունը եւ իրականացնել գլոբալ նախագիծ:

Մնում է Իսլամական աշխարհը, սակայն վերջին զարգացումները ցույց են տալիս, որ այն համախմբված եւ ինքնուրույն ուժ չէ:

Կարելի է կանխատեսել, որ մոտակա տասնամյակներում, եթե որեւէ արտառոց բան տեղի չունենա, աշխարհի առաջատար նախագծողը մնալու է Միացյալ Նահանգները, իսկ նոր գլոբալ խաղացողներն ի վիճակի չեն կամ չեն ցանկանում նման դեր ստանձնել:

Գլոբալ նախագծողները, բացի ռազմական եւ տնտեսական հզորությունից, կարիք ունեն առաջարկել նաեւ մրցունակ գաղափարական կամ քաղաքակրթական նախագծեր: Այս առումով այսպիսի նախագիծը պետք

է լինի ունիվերսալ, գրավիչ ամբողջ մարդկության համար: Նման պարագայում անգլոսաքսոնական նախագիծը, կարծես թե, այլընտրանք չունի: Նման նախագիծ, գուցե, կարող էր առաջ քաշել Եվրոպական միությունը՝ որպես նոր տեսակի միջպետական միավորում, սակայն գաղափարախոսական կամ քաղաքակրթական տեսանկյունից այն առանձնապես չի տարբերվում ամերիկյանից: Ինքնին ԵՄ-ը հանդիսանում է կաթոլիցիզմի քաղաքական դեմքը, քանի որ հիմնադրվել է Կաթոլիկ եկեղեցուն մոտ կանգնած եւ սոցիալական շուկայական համակարգի արժեքներ դավանող լիդերների կողմից՝ Շուման, դը Գոլ, Ադենաուեր:

Պետք է նշել, որ որպես քաղաքակրթական մոդել Արեւմտյան նախագիծը ներառեց աշխարհայացքային արժեքներ, վարքագծի չափանիշներ, կառավարման եւ իրավական կանոններ, նորմեր ու ընթացակարգեր: Թեեւ դրանց մեծ մասն այսօր գտնվում է էրոզիոն վիճակում, սակայն դա չի նշանակում, որ Արեւմտյան նախագիծը մահամերձ է:

Իսկապես, ներկայումս բազմաթիվ փորձագետներ շտապում են «թաղել» Ամերիկան: Ակնհայտ է, որ Ամերիկայի թուլացումը հետեւանք է ավելի շուտ գլոբալ տնտեսական մոդելի սպառման, քան թե քաղաքակրթական եւ աշխարհաքաղաքական կողերի փոփոխության: Մինչդեռ հենց այդ կողերն են կազմում այսպես կոչված Արեւմտյան նախագիծը եւ արդի աշխարհում ԱՄՆ առաջնորդության հենքը: Դրա ստեղծման համար Արեւմուտքը, հատկապես՝ անգլոսաքսոնական քաղաքականությունը, ծախսել են վերջին 200 տարին՝ արդյունքում ստանալով աշխատող ժողովրդավարական քաղաքական կարգեր, մինչեւ վերջերս արդյունավետ տնտեսական մոդել եւ գրավիչ կենսակերպ, որին ձգտում էին հասնել նաեւ ոչ արեւմտյան երկրները:

Փաստ է, որ ամերիկյան քաղաքական ու տնտեսական հզորությունը նվազում է, իսկ ֆինանսական ու տեխնոլոգիական գերազանցությունը նահանջ է ապրում: Ինքը՝ Միացյալ Նահանգները, ճանաչեց իր ազդեցության նվազման իրողությունը՝ գլոբալ ճգնաժամի դեմ պայքարի նպատակով քսան առավել զարգացած պետությունների խումբ (G-20) ձեւավորելու նախաձեռնությամբ հանդես գալով: Սակայն հենց այդ նախաձեռնությունը ցույց է տալիս, որ ամերիկյան գլոբալ նախագիծը ոչ թե հեռանում է ասպարեզից կամ զիջում իր տեղը, այլ վերափոխվում է:

Հենց վերջերս տեղի ունեցած իրադարձությունները՝ Ուսամա բին-Լադենի վերացումը, Դոմինիկ Սթրոս-Կանի հետ կապված սկանդալը, Ռադկո Մլադիչի հանձնումը Հաագայի տրիբունալին, «Մեծ ութնյակի» գագաթաժողովը, վկայեցին, որ տեղեկատվական ասպարեզում առաջնորդող են մնում ամերիկյան եւ բրիտանական լրատվամիջոցները: Բացի այդ, ԱՄՆ-ը

վերահսկում է համաշխարհային ինտերնետը, քանի որ այնտեղ են գտնվում նրա սկզբնական սերվերները: Բոլոր կարելիքագույն համակարգչային ընկերությունները՝ Microsoft, IBM, Hewlett-Packard, Compaq, Cisco, Apple, Google, Yahoo, եւս ԱՄՆ-ից են ղեկավարվում: Պատկերն ամփոփում են Հոլիվուդը, որն ամերիկյան շոու-բիզնեսը դարձրել է գլոբալ, եւ նավիգացման GPS գլոբալ համակարգը: Այսպիսով, տեղեկատվական եւ մշակութային ասպարեզում ԱՄՆ գերիշխանությունը դեռեւս անվիճարկելի է:

Ամերիկյան անվերապահ գերիշխանության մյուս ոլորտն է ռազմատեխնիկականը: ԱՄՆ (եւ Մեծ Բրիտանիայի) ռազմակայաններն ու զորքերը սփռված են ավելի քան հարյուր երկրներում՝ ապահովելով Արեւմուտքի ռազմավարական գերակայությունը մոլորակի բոլոր տարածաշրջաններում, մուտքը դեպի հումքային ռեսուրսներ, համաշխարհային օվկիանոսում ռազմավարական հաղորդակցությունների եւ տիեզերքում հեռահաղորդակցությունների նկատմամբ վերահսկողությունը: ԱՄՆ-ը պաշտպանության համար ավելի է ծախսում, քան աշխարհի բոլոր առաջատար տերությունները՝ միասին վերցրած: ԱՄՆ-ը նաեւ առաջնորդում է ռազմատեխնիկական ոլորտի «հեղափոխությունը»: Մյուս կողմից, արդի աշխարհակարգի վերածելման փուլում ռազմական հզորության նշանակությունը նվազում է եւ նույնիսկ իմաստազրկվում՝ Աֆղանստանում, Իրաքում, տարաբնույթ տարածաշրջանային հակամարտություններում կայունություն հաստատելու անկարողության պայմաններում: Բավական է հիշել, թե ինչ պատահեց խորհրդային ռազմական հզոր մեքենայի հետ, որը մի քանի գիշերում պարզապես առանց կռվի անհետացավ Արեւելյան Եվրոպայի եւ նախկին ԽՍՀՄ տարածքներից՝ զուտ քաղաքակրթական պարտության պատճառով:

Այն, որ գլոբալ ճգնաժամը սկսվեց ամերիկյան բանկերի սնանկացումից, վկայում է, որ Ամերիկյան շարունակում է կատարել կենտրոնական դեր համաշխարհային տնտեսության մեջ: Չնայած ամերիկյան դոլարի թուլությանը, այն շարունակում է մնալ համաշխարհային հիմնական արժույթը: Նրանով են կատարվում հաշվարկները համաշխարհային առևտրում եւ գնահատվում նավթն ու ոսկին: ԱՄՆ-ը մնում է առավել զարգացած շուկան, որն ունի ամենաանկախ սպառումը: Վերջապես, ամերիկյան Դաշնային պահուստային համակարգն ի վիճակի է ապակայունացնել համաշխարհային տնտեսությունն իր ցանկացած քայլով:

Չինաստանը, որին սկսել են վերագրել այս տասնամյակում կամ դարում նոր գլոբալ առաջնորդի դերը, իրականում չունի գլոբալ քաղաքակրթական նախագիծ: Ունենալ աշխարհի ամենամեծ տնտեսությունը՝

դեռ չի նշանակում լինել համաշխարհային առաջնորդ: Դժվար թե բոլոր նրանք, ովքեր մարգարեանում են չինական նախագծի հաղթանակի մասին, կցանկանան ապրել, ինչպես չինացիք, երգել չինական երգեր եւ նայել չինական կինոնկարներ: Դա նույնիսկ չինացիներին մշակութապես մոտ կանգնած կորեացիներն ու վիետնամցիները չեն ցանկանում, էլ չխոսելով մնացած աշխարհի մասին: Եվ ամենակարեւորը՝ դա չեն ցանկանում իրենք՝ չինացիները, որոնք ամեն կերպ խուսափում են գլոբալ դերակատարումից: Չինաստանը մեծ, բացառիկ, սակայն ինքնամփոփ, ինքնակենտրոնացած քաղաքակրթություն է:

Այդուհանդերձ, փորձագետները նշում են, որ չինական անընդհատ տնտեսական վերելքն ինքնին լուրջ աշխարհաքաղաքական մարտահրավեր է ԱՄՆ-ին եւ ամբողջ Արեւմտյան նախագծին, քանի որ չինական տնտեսական մոդելը կոմունիստական եւ արեւելաասիական արդիականացվող ավտորիտարիզմի մոդել է: Ի տարբերություն ռուսական-խորհրդային նախագծի, չինական նախագիծը չունի գլոբալ կամ մեսիական բաղադրիչ, սակայն այդ նախագիծն աշխատում է եւ դրանով վտանգ է ներկայացնում ոչ այնքան Արեւմուտքի նախագծին, որքան կապիտալիզմի՝ իրեն սպառած այն մոդելին, որն այսօր դարձել է գլոբալ ճգնաժամի սկզբնաղբյուր:

Այսինքն՝ չինական պետական կապիտալիզմի հաջողությունները կասկածի տակ են դնում ժողովրդավարական քաղաքական համակարգերով շուկայական տնտեսությունների գերակայությունը: Թույլ տալով միլիարդատերերի գոյությունը՝ Չինական Կոմկուսը թույլ չի տալիս նրանց քաղաքական իշխանություն ունենալ. բացի այդ, ՉԿԿ-ն ստեղծել է քաղաքական ղեկավարության պարբերական փոփոխման աշխատող մի ձեւ՝ առանց ընտրությունների անցկացման: Այսպիսով, կամա թե ակամա Չինաստանը դառնում է Արեւմտյան նախագծի մրցակից:

Բացի այդ, հարկ է հիշել, որ գլոբալ նախագծմանը մասնակցող ուժերը կամ տերությունները պետք է գերազանցություն ունենան բոլոր բնագավառներում: Նրանք պատասխանատու են աշխարհի զարգացման, անվտանգության եւ հավասարակշռության պահպանման համար՝ ունենալով միաժամանակ բազում շահաբաժիններ: Սակայն նաեւ նրանցից են պահանջում հաշիվները: Չինաստանն այս առումով ուզում է ստանալ շահույթներ, սակայն չի ցանկանում վճարել՝ ի տարբերություն ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի:

Ինչ վերաբերում է Արեւմտյան նախագծի մյուս հավանական այլընտրանքին, ապա Իսլամական աշխարհը որպես գլոբալ նախագիծ ներկայացված է ոչ թե պետության, այլ պետությունների եւ տարաբնույթ

կրոնաքաղաքական իսլամական շարժումների կողմից: Սակայն այդ նախագծի կրողները բավական ցրված են. այսպես, Իրանում կա քաղաքացիների զգալի հատված, որը չի տեսնում իրեն որպես գլոբալ իսլամական նախագծի մի մաս: Իսկ, ասենք, անգլիական Բիրմինհեմում կան ֆրանսիական Մարսելում կարող է լինել համայնք, որը համարում է իրեն իսլամական աշխարհի մաս:

Ունենալով քաղաքակրթական կամ գաղափարախոսական առանցք՝ իսլամական նախագիծը, սակայն, չունի տնտեսական եւ ռազմական հզորություն՝ այն աշխարհում տարածելու համար: Ավելին, ներկայումս իսլամական աշխարհը հայտնվել է ներքին հակամարտությունների հորձանուտում: Մահմեդական երկրներում վարչակարգերի անկումը կամ թուլացումը կատարվում է հենց գլոբալ նախագծման շրջանակներում:

* * *

Միջազգային արժութային հիմնադրամի գործադիր տնօրեն Դոմինիկ Սթրոս-Կանի քաղաքականության միջոցով ապահովվող Եվրոպայի ֆինանսական կայունությունը նրա հեռացմամբ փաստացի դրվեց կասկածի տակ: Մինչդեռ Սթրոս-Կանն այսպես կոչված «ծախ» գլոբալ նախագծի ջատագովն էր, որը շեշտը դնում էր ոչ թե Արեւմուտքի շահերի ուժային պաշտպանության, այլ տարբեր համաշխարհային խաղացողների միջեւ համաձայնությունների միջոցով գլոբալ գործընթացների կառավարման վրա: Սակայն աշխարհում շարունակվող գլոբալ ֆինանսական-տնտեսական ճգնաժամը, որին ավելացավ պարենային հիմնախնդիրը, լուծում չի ստանում, եւ իրավիճակն ավելի է վատթարանում: Սա ստիպում է գլոբալ նախագծողների «աջ» թեւին արագացնել գլոբալ զարգացումները՝ առաջ բերելով ուժային տարբերակներ, ինչպես, օրինակ, Մեծ Մերձավոր Արեւելքում: Արաբական երկրներում ընթացող հեղափոխությունները եւ պատերազմը Լիբիայում աշխարհի վերածեւման ընդամենը մեկ փուլ են ներկայացնում:

Այս համատեքստում փորձագետները հավանական են համարում, որ բին-Լադենի վերացումը, ավարտելով հին ժամանակաշրջանը, բացում է նորը, մասնավորապես՝ Սաուդյան Արաբիայի, Իրանի եւ Պակիստանի ուղղությամբ վճռական քայլերի կիրառման, իսկ վերջին հաշվով նաեւ՝ Չինաստանի հարաճուն պահանջների զսպմանն ուղղված քաղաքականության ժամանակաշրջանը:

Այս պահը բավական լավ գիտակցվեց Պեկինում: Չինաստանը փորձեց ցույց տալ Արեւմուտքին նրա նախագծի ծավալման սահմանները: Եվ այդ սահմանները, ըստ Պեկինի, անցնում են Կենտրոնական եւ

Չարավային Ասիայում, երբ մայիսին ՉԺՅ-ն պաշտոնապես զգուշացրեց ԱՄՆ-ին, որ Պակիստանի դեմ հարձակումը, որի մասին վերջերս սկսել են խոսել Վաշինգտոնում, կընկալվի որպես Պեկինի դեմ հարձակում: Դրանով համաշխարհային օրակարգ մտավ լուրջ հարց. Պակիստանը, որը տասնամյակներով հանդիսանում էր ԱՄՆ եւ Մեծ Բրիտանիայի դաշնակիցը, զուգահեռաբար վերածվելով իսլամական արմատականության հիմնական կենտրոնի, դառնում է ՉԺՅ ռազմավարական դաշնակիցը: Սա վկայում է, որ Պակիստանը եւ Չինաստանը կարող են մարտահրավեր նետել գլոբալ նախագծողներին՝ սեփական տարածաշրջաններում: Մինչդեռ Մեծ Մերձավոր Արեւելքում եւ Մեծ Կենտրոնական Ասիայում հենց Պակիստանն է դառնալու խոշորագույն տեղաշարժերի ցուցիչը եւ ԱՄՆ քաղաքականության թիրախը: Տարածվեց տեղեկատվություն, որ Միացյալ Նահանգները ծրագրում է ուժային գործողություններ՝ Պակիստանի միջուկային ներուժը վերահսկողության տակ վերցնելու կամ վերացնելու համար: Դրան էլ անմիջապես հետեւեց Պեկինի նախազգուշացումը:

Այս պայմաններում, «շնորհիվ» Արեւմտյան նախագծի, կարելի է ականատես լինել չինական տարածաշրջանային սահմանափակ եւ իսլամական գլոբալ նախագծերի միջեւ դաշինքի կնքմանը:

Դա էլ, իր հերթին, հստակեցնում է Արեւմտյան նախագծի ներկայիս ռազմավարությունը. դիմակայել արմատական իսլամիզմի տարածմանը՝ թուլացնելով իսլամական աշխարհը եւ կլանելով այն իր նախագծի մեջ, նպաստել Իրանի վերափոխմանը՝ որպես տարածաշրջանի առանցքային պետության, դառնալ տիրապետող Մեծ Մերձավոր Արեւելքում, զսպել Չինաստանի՝ որպես տնտեսական մրցակցի վերելքը, կանխել Ռուսաստանի կայսերական հավակնությունների վերածնունդն Արեւելյան Եվրոպայի, Չարավային Կովկասի ու Կենտրոնական Ասիայի ուղղությամբ՝ նպաստելով Ռուսաստանի հետզհետե արեւմտականացմանը:

Այսպիսով, պետք է մշել, որ արդի աշխարհում գլոբալ նախագծի իրականացման համար անհրաժեշտ բոլոր տարրերն ու միջոցներն ունի, թերեւս, միայն Արեւմուտքը, հատկապես՝ նրա անգլոսաքսոնական հատվածը: Ակնհայտ է, որ ինչքան էլ թուլանա վերջինիս տնտեսական ու ռազմական հզորությունը, այնուամենայնիվ, քաղաքակրթական առավելությունները դեռեւս մնում են Արեւմտյան նախագծի կողմը: Ներկայիս աշխարհակարգի վերածելուն՝ առանց Արեւմուտքի առաջնորդության, պարզապես անհնար է քվում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ

Սեւակ Սարուխանյան

Այն բանից հետո, երբ մայիսի 1-ին Իրանի նախագահը 10-օրյա դադարից հետո վերադարձավ աշխատանքի եւ հայտարարեց, որ պետական մարմինները պետք է հետեւեն հոգեւոր իշխանությունների հաստատած ուղենիշներին, տպավորություն ստեղծվեց, որ Իրանի նախագահը հարթել է տարածայնություններն Իրանի հոգեւոր դասի հետ եւ քաղաքական ճգնաժամն Իրանում աստիճանաբար կարգավորվում է: Այս կարծիքի հաստատմանը նպաստեց նաեւ Իրանի հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեյի հայտարարությունը, թե կառավարությունը թեւ թույլ է տվել սխալներ, սակայն բոլորը պետք է իրենց քննադատությամբ ու խորհուրդներով աջակցեն նրան՝ ի բարօրություն իսլամական հանրապետության: Ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, քաղաքական պայքարն Իրանում դադարի նշույլներ չի ցուցաբերում:

Ներքաղաքական պայքարի ընթացքը

Հոգեւոր առաջնորդի՝ Ահմադինեժադին «աջակցելու» կոչը չդադարեցրեց երկու կարեւոր հակաճախագահական գործընթացներ՝ նախագահի պաշտոնակալության քննարկումը մեջլիսում եւ Մ.Ահմադինեժադի յուրայինների ձերբակալությունները:

Ինչպես եւ պլանավորված էր, մեջլիսը մայիսի 27-ին լսումներ անցկացրեց կառավարության հակասահմանադրական գործունեության մասին, որոնք, ինչպես ենթադրվում էր մայիսի սկզբին, կարող էին բերել նախագահի լիազորությունների դադարեցման որոշմանը: Չնայած նման որոշում չընդունվեց, բայց մեջլիսը դրանից չհրաժարվեց եւ որոշեց կիրառել, պայմանականորեն ասած, «երկարատեւ գործընթացի» մարտավարությունը. պատգամավորները որոշեցին դիմել դատարան, որպեսզի այն քննարկի նախագահ Մ.Ահմադինեժադի՝ նավթի նախարարի պաշտոնը ստանձնելու մասին վերջինիս ստորագրած հրամանը: Այն, որ հրամանն անօրինական է, ակնհայտ է, քանի որ ինքն իրեն նավթի նախարար նշանակած նախագահն իր որոշումը չի քննարկել ոչ հոգեւոր առաջնորդի, ոչ Պահապանների խորհրդի եւ ոչ էլ խորհրդարանի հետ:

Չնայած հունիսի 3-ին նախագահը թողեց նավթի նախարարի պաշտոնը՝ դատարանի գալիք որոշումը կարող է նախագահի պաշտոնակության հիմք հանդիսանալ: Սպասելով դատարանի որոշմանը՝ Իրանի խորհրդարանը սպասում է նաեւ նրան, թե հետագա ինչ ընթացք կունենան նախագահ-հոգեւոր իշխանություններ հարաբերությունները եւ կկարողանա՞ արդյոք Մ.Ահմադինեժադը որեւէ դիմադրություն ցույց տալ իր իսկ շրջապատի դեմ կազմակերպված արշավին (ինչն, այսօրվա դրությամբ, առավել քան կասկածելի է թվում՝ հաշվի առնելով այն լայնածավալ ձերբակալությունները, որոնք իրականացնում են Իրանի անվտանգության ծառայությունները):

Համաձայն իրանական կայքերի հաղորդագրությունների՝ վերջին ամսվա ընթացքում ձերբակալվել են Մ.Ահմադինեժադի մի քանի տասնյակ թիմակիցներ, որոնց մեծ մասը մեղադրվում է հակաիսլամական գաղափարների տարածման, ինչպես նաեւ հակապետական գործունեության մեջ: Ձերբակալված անձանց մեջ ամենաազդեցիկը նախագահի աշխատակազմի խորհրդական Կազեմ Կիափաշան է, այսպես կոչված «գորշ կարդինալը», մարդ, որը նախագահի եւ նրա աշխատակազմի ղեկավար Ռահիմ Մաշայիի հետ մշակում էր նախագահի քաղաքականությունը, անմիջական մասնակցություն ուներ երկրի կառավարման գործընթացին: Տարբեր իրանական աղբյուրներ Կիափաշային անվանում են նախագահի «մտերիմն ու ընկերը», իսկ վերջին ամիսներին անգամ քննարկվում էր, որ Մ.Ահմադինեժադը պատրաստվում է Կիափաշային «նախագահ դարձնել»՝ հաշվի առնելով այն, որ Ռ.Մաշայիի դիրքերը հոգեւոր շրջանակներում առավել քան թույլ են: Կիափաշայի ձերբակալությունը, ինչն այսօր արդեն հաստատված է նաեւ իրանական իշխանությունների կողմից, խաղից, փաստորեն, հանեց 2013 թվականին նախագահի պաշտոնին հավակնող թեկնածուներից մեկին, ով կարող էր ստանալ գործող նախագահի աջակցությունը: Ըստ ոչ պաշտոնական տեղեկատվության, որը տարածվել է նաեւ մի շարք արեւմտյան լրատվամիջոցների կողմից, Կիափաշայի հետ ձերբակալվել է նաեւ նախագահին կից գործող Մշակութային խորհրդի նախագահ Ռոջաթոլէսլամ Ա.Ամիրիֆարը: Նշենք, որ եթե ձերբակալությունն, իրոք, տեղի է ունեցել, ապա դրա թույլտվությունը տրվել է հենց Ա.Խամենեիի կողմից, քանզի առանց նրա համաձայնության Ռոջաթոլէսլամի՝ հոգեւոր առաջնորդի փաստացի ներկայացուցչի ձերբակալություն չի կարող իրականացվել:

Ներկայումս բաց է մնում այն կարեւոր հարցերից մեկը, թե արդյոք ձերբակալված է Ռ.Մաշային: Նրա ձերբակալության մասին արդեն 3

շաբաթ է խոսվում է, եւ այն, որ նախագահի աշխատակազմի ղեկավարն անհասանելի է տանը եւ ընդհանրապես չի ներկայանում աշխատանքի, խթանում է նրա ձերբակալության մասին լուրերի տարածումը:

Այն, որ նախագահի բազմաթիվ յուրայիններ են ձերբակալված, անուղղակիորեն հաստատվում է նաեւ նախագահի կողմից: Հունիսի 7-ին նախագահը, պատասխանելով լրագրողի՝ իր օգնականների ձերբակալության եւ «կախարդների» հետ վերջիններիս կապի մասին հարցին, ասաց. «Այդ մարդկանց, որոնց մասին խոսում եք, կարծես թե ձերբակալել են, ուրեմն թողեք, որ կառավարությունն իր գործը շարունակի: Այժմ պետք է մեզ թույլ տրվի շարունակել մեր աշխատանքը, ծառայել ժողովրդին եւ կատարել մեր հեղափոխական նպատակները»: Նախագահի նման պատասխանը կարող է տպավորություն ստեղծել, թե նա ամբողջովին զիջել է դիրքերը, ընդունել պարտվողական կեցվածք, սակայն լրագրողների հետ նույն հանդիպման ժամանակ նա պահպանողական եւ հոգեւոր շրջանների հետ իր հարաբերությունները բնութագրեց որպես «մենք 180 աստիճանով հեռու ենք իրարից. մենք հակառակ կողմերում ենք»: Հարկ է նշել, որ նախագահի թիմակիցների ձերբակալություններն, ամենայն հավանականությամբ, նրա՝ Երեւան կատարելիք այցի հետաձգման հիմնական պատճառներից է. ըստ Fararu կայքի՝ նախագահին ուղեկցող երկու անձանց իշխանությունները վերջին պահին արգելել են լքել Թեհրանը, ինչի արդյունքում Մ.Ահմադինե-ժադը ստիպված է եղել հրաժարվել մեկնել Երկրից: Այցը հետաձգվել է ֆորսմաժորային պայմաններում, եւ դա է վկայում նաեւ այն, որ իրանական պետական IRNA գործակալությունն այցի վերաբերյալ վերջին պաշտոնական հաղորդագրությունը տարածել է հունիսի 5-ին, ժամը 18:00-ին մոտ, այցից մի քանի ժամ առաջ: Ակնհայտ է, որ այցը հետաձգվել է վերջին պահին, բացառված չէ նաեւ, որ հենց օդանավակայանում, որտեղ եւ, հավանաբար, նախագահի աշխատակիցներին թույլ չեն տվել լքել պետության տարածքը:

Հունիսի 5-ին, Իրանի խորհրդարանի ղեկավար Ալի Լարիջանին բավական կոշտ նամակ է հղել նախագահին՝ պահանջելով այսուհետ հետեւել մեջլիսի որոշումներին՝ կապված նավթի նոր նախարարի նշանակման հետ: Պետք է ընդգծել նաեւ, որ նախագահի՝ հունիսի 7-ի մամուլի ասուլիսը, որում նա հայտարարեց իր եւ հոգեւոր իշխանությունների տարածայնությունների մասին, նախատեսված չէր ընթացակարգով (քանի որ նախագահն այդ ժամանակ պետք է գտնվեր Հայաստանում) եւ հապճեպ էր կազմակերպվել: Ամենայն հավանականությամբ, դա հետեւանքն էր նույն այն գործընթացների, որոնք խափանեցին Մ.Ահմա-

դինեժադի այցը երեւան: Նշենք, որ նախագահին մեղադրանքներ ներկայացրած Ա.Լարիջանին վերջին շրջանում ակտիվացրել է նաեւ իր արտաքին քաղաքական գործունեությունը. հենց նա, այլ ոչ թե նախագահը, պաշտոնական առաջարկ ներկայացրեց Ծոցի երկրներին՝ ձեւավորել համատեղ հակահրթիռային պաշտպանության համակարգ, եւ հենց Լարիջանին ՕՊԵԿ միստից առաջ հայտարարեց, որ Իրանը դեմ է նավթի արդյունահանման ծավալների քվոտաների փոփոխությանը: Այն, որ այս հայտարարությունն արվեց այն ժամանակ, երբ նախագահ Ահմադինեժադը զբաղեցնում էր նավթի նախարարի պաշտոնը, ինչ-որ չափով խորհրդանշական է:

Ուշագրավ է նաեւ այն, որ Իրանի նախագահը, ամենայն հավանականությամբ, կորցրել է աջակցությունը Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսում: Համենայնդեպս, այդ մասին է խոսում Իրանի Փորձագետների համագումարի անդամ, այաթոլա Ա.Նամազիի հայտարարությունը, թե Իրանի հոգեւոր առաջնորդ Խամենեյիի հետ հանդիպման ժամանակ Պահապանների կորպուսի գլխավոր հրամանատար Մ.Ջաֆարին խնդրել է իրեն թույլ տալ ձերբակալել Ռ.Մաշայիին, ինչի հավանությունը, սակայն, չի ստացել: Իսկ Պահապանների կորպուսում Խամենեյիի ներկայացուցիչը՝ Մ.Ջոլնուրը, հունիսի 8-ին հայտարարեց, որ կորպուսը պատրաստ է հարվածել հակապետական ուժերին, որոնք ուզում են «ոչնչացնել համակարգը՝ հենց օգտագործելով համակարգի տված հնարավորությունները»: Ակնհայտ է, որ խոսքը իշխանության ղեկին գտնվող մարդկանց մասին է, որոնք էլ հենց ունակ են քայքայել համակարգը ներսից:

Յետագա զարգացումների մասին

Ամենայն հավանականությամբ, Իրանի հոգեւոր իշխանություններն ամեն կերպ խուսափում են նախագահին պաշտոնաթող անելուց, քանի որ դա կհանգեցնի նոր ընտրությունների, որոնց անցկացումը, արաբական հեղափոխությունների ալիքի ազդեցության պարագայում, կարող է ապակայունացնել իրավիճակը երկրում: Սակայն առաջիկա ամիսներին հոգեւոր իշխանությունները կանեն ամեն ինչ նախագահի ձեռքից ազդեցության լծակները խլելու նպատակով՝ հարվածելով, առաջին հերթին, նրա թիմին կամ «կլանին», որի նշանակալից մասն Ահմադինեժադի հետ աշխատում եւ համագործակցում է վերջին 15 տարիների ընթացքում: Նրանց մեծ մասը բարձր քաղաքական կարիերան սկսել է Իրանական Ադրբեջանում եւ Քուրդիստանում, այդ պատճառով նախագա-

հի թիմը հաճախ պայմանականորեն անվանում են «արդաբիլյան կլան»։
Նրանց թվում են.

1. Նախագահի աշխատակազմի ղեկավար Մաշային, որը Չեղափոխության պահապանների կորպուսի Քուրդիստան նահանգի ներկայացուցչության հիմնադիրն է, հետագայում նաեւ բարձր պաշտոն է զգաղեցրել կորպուսի Արդաբիլի հրամանատարությունում,

2. Քուրդիստանի նախկին նահանգապետ, ներկայումս՝ փոխնախագահ Մ.Ռահիմին, որին մեջլիսը մեղադրում է «կոռուպցիոն խմբի» («Ֆաթեմի խումբ»՝ Ֆաթեմի փողոցի անունով, որտեղ եւ գտնվում է փոխնախագահի գրասենյակը) պարագլուխ լինելու մեջ։ Նա համարվում է նախագահի «գանձապահը» եւ, ինչպես շատերն են գտնում, ղեկավարում է ողջ աշխատակազմի ֆինանսական հոսքերը,

3. Ալի Նիկզադը, որը ժամանակին եղել է Արդաբիլի նահանգապետը, 2009-ից ղեկավարում է քաղաքաշինության նախարարությունը, իսկ 2011-ի փետրվարի 7-ից Ահմադինեժադը նրան համատեղությամբ նշանակել է նաեւ տրանսպորտի նախարար։ Յենց Նիկզադին է պատկանում պետական կառույցները թեհրանից դուրս բերելու եւ նոր քաղաք կառուցելու նախագիծը, որում հոգեւոր իշխանությունները տեսան կառավարության՝ Ղոմից անկախացման պոտենցիալ վտանգ,

4. առողջապահության եւ սոցիալական հարցերի, նախկինում՝ ներքին գործերի նախարար եւ Արեւմտյան Ադրբեջան նահանգի փոխնահանգապետ Ս.Մահուլին, որը համարվում է ժամանակակից Իրանի ամենահարուստ մարդկանցից մեկը։ Ըստ ոչ պաշտոնական տեղեկատվության՝ նրա ունեցվածքն անցնում է մի քանի միլիարդ դոլարը,

5. Նահատակների հիմնադրամի ղեկավար եւ նախագահի ազգական Մ.Ջարիբաֆանը, որն անմիջականորեն աշխատում էր իրանա-իրաքյան պատերազմի վետերանների հետ, լուծում նրանց հուզող հարցերը եւ նրանց պոտենցիալ աջակցությունն ապահովում նախագահի համար։

Առաջիկայում, ամենայն հավանականությամբ, Իրանում պետք է սպասել պայքարի հենց վերը նշված անձնավորությունների դեմ, որին կմասնակցեն թե՛ հոգեւոր իշխանությունները, թե՛ իրանական մեջլիսը։ Թեեւ կանխատեսումներ անելն Իրանի դեպքում բավական անշնորհակալ գործ է, սակայն ուժերի այսօրվա դասավորությունը ենթադրում է, որ նախագահի թիմը պարտություն կկրի, ինչի արդյունքում Մ.Ահմադինեժադի նախագահության մնացած 2 տարիներին նախագահի հնարավորություններն ու փաստացի ազդեցությունը կլինեն սահմանափակ։

ՍԻՐԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ

Հայկ Գաբրիելյան

Երբ այս տարվա մարտի կեսերին Սիրիայում սկսվեցին ժողովրդական հուզումները, Թուրքիան սկզբում լռություն պահպանեց՝ հետեւելով իրադարձությունների ընթացքին: Սակայն արդեն մարտի 26-ին Թուրքիայի վարչապետ Էրդողանը, գիտակցելով իրավիճակի պայթյունավտանգ լինելը, հեռախոսազրույց ունեցավ Սիրիայի նախագահ Բաշար Ասադի հետ եւ հայտնեց իր լիակատար աջակցության մասին՝ չմոռանալով անհապաղ բարեփոխումներ իրականացնելու եւ ցուցարարների պահանջները բավարարելու կոչեր հնչեցնել:

Մարտի 30-ին PKK առաջնորդներից Մուրաթ Քարայըլանը սիրիացի քրդերի անունից սպառնաց ապստամբություն բարձրացնել. «Սիրիայի քրդաբնակ հյուսիս-արեւելքում դեռեւս հարաբերական անդորր է տիրում: Սակայն բացառված չէ, որ հուզումների ալիքը տարածվի ողջ երկրով մեկ: Եթե քրդերն ապստամբություն բարձրացնեն, ապա դա Սիրիայի համար կարող է առավել լուրջ հետեւանքներ ունենալ, քան արաբների խռովության դեպքում է: Սիրիան պետք է ճանաչի քրդերի ազգային ինքնությունը եւ բավարարի քուրդ ժողովրդի քաղաքական, մշակութային ու հասարակական պահանջները»:

Սա առաջացրեց Էրդողանի խոր մտահոգությունը, որը մարտի 31-ին զանգահարեց Ասադին. «Սիրիական զարգացումներն անմիջականորեն իրենց ազդեցությունն են ունենում հարեւան Թուրքիայի վրա: Թուրքիայի համար մեծ վտանգ են ներկայացնում Սիրիայում բնակվող 1.4 միլիոն քրդերը: Եթե Դուք հրաժարական տաք, ապա 1.4 միլիոն սիրիական քրդերը, Թուրքիայում բնակվող 15 միլիոն, Իրանում բնակվող 7 միլիոն եւ Հյուսիսային Իրաքում բնակվող 6 միլիոն քրդերի հետ միասին ոտքի կկանգնեն եւ միացյալ անկախ պետության պահանջ կդնեն»:

Արդեն ապրիլի 7-ին Սիրիայի քրդերի սպառնալիքն իր ազդեցությունն ունեցավ. Ասադը քաղաքացիություն շնորհեց երկրի հյուսիսում բնակվող 300.000 քրդերի: 1962 թվականի մարդահամարի ժամանակ 120.000 քրդեր դուրս էին մնացել Սիրիայի քաղաքացիների ցանկից եւ գրեթե կես դար համարվել օտարերկրացի, քանի որ Սիրիա էին ներթափանցել հարեւան Թուրքիայից:

Ապրիլի 26-ին Երդողանն արդեն հեռախոսագրույց ունեցավ ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի¹ հետ՝ քննարկելով արաբական աշխարհի վերջին զարգացումները: Օբաման ու Երդողանն անհանգստություն հայտնեցին, որ սիրիական կառավարությունն ուժ է կիրառում սեփական քաղաքացիների նկատմամբ, եւ նրան կոչ արեցին վերջ դնել այդ ամենին ու անհապաղ ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնել:

Դրա հաջորդ օրն իսկ Երդողանն ազդանշան ուղարկեց Ասադին՝ Ստամբուլում արտոնելով սիրիացի ընդդիմադիրների հավաքը: Վերջիններս նշեցին, որ արդեն 50 տարի է, ինչ Սիրիայում շարունակվում է զուլումի դարաշրջանը, եւ այդ ընթացքում ոչ մի բարեփոխում չի իրականացվել՝ ընդգծելով, որ իրենց ուզածը միայն ազատությունն է:

Ապրիլի 28-ին Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլի գլխավորությամբ կայացավ Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) նիստ, որին մասնակցեցին նաեւ վարչապետ Երդողանն ու փոխվարչապետ Ջեմիլ Զիչեքը: 6.5 ժամ տեւած այդ նիստը նվիրված էր սիրիական ու լիբիական, ինչպես նաեւ Թուրքիայի ներքաղաքական զարգացումներին: ԱԱԽ-ն սիրիական իշխանություններին կոչ արեց անհապաղ բարեփոխումներ իրականացնել, որոնք ուղղված կլինեն սիրիական ժողովրդի քաղաքական, սոցիալական ու տնտեսական օրինական պահանջների ապահովմանը:

Նույն օրը թուրքական լրատվամիջոցների համար անսպասելիորեն Երդողանի հատուկ բանագնացի կարգավիճակով Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսում հայտնվեց Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության (MIT) ղեկավար Յաքան Ֆիդանը, որին ուղեկցում էր Պետական պլանավորման կազմակերպության ղեկավար (DPT) Քեմալ Մադենօղլուն: Նրանք հանդիպումներ ունեցան նախագահ Ասադի ու վարչապետ Ադիլ Սեֆերի հետ՝ համոզելով նրանց արագացնել բարեփոխումների անցկացման գործընթացը եւ այդ պլանում օգտվել Թուրքիայի ունեցած փորձից: Ֆիդանը հանդիպեց նաեւ իր սիրիացի գործընկերների հետ:

Ապրիլի 29-ին Սիրիայում տեղի ունեցավ «Ցասման օր» ակցիան, որի ժամանակ զոհվեց մի քանի տասնյակ մարդ: Նույն օրը երեկոյան Յաթայ նահանգում (նախկին Ալեքսանդրեթի սանջակ) թուրք-սիրիական սահմանը հատեցին Սիրիայի 234 քաղաքացիներ: Այդ պատճառով Թուրքիայի արտգործնախարար Ահմեթ Դավութօղլուն ստիպված եղավ Քոնիայից անհապաղ վերադառնալ Անկարա եւ հրատապ գումարել «սիրիական» նիստ: Ժամեր տեւած այդ նիստին, որը նախագահում էր հենց Դավութօղլուն, մասնակցել են նաեւ ներքին գործերի նախարար Օսման Գյունեշը,

Գլխավոր շտաբի պետի տեղակալ, բանակի գեներալ Ասլան Գյուները, MIT նախագահ Չաքան Ֆիդանը, վարչապետի տեղակալ էֆրան Ալան եւ արտգործնախարարի առաջին տեղակալ Ֆերիդուն Սինիրլիօղլուն: Նիստում քննարկվեցին սիրիական վերջին զարգացումները եւ կարելոթություն տրվեց սիրիական գաղթականների մեծ ներհոսքի դեմն առնելուն ուղղված միջոցառումներին:

Մայիսի սկզբին թուրքիայի տոնը փոխվեց. մայիսի 2-ին Էրդողանը սպառնաց սիրիական իշխանություններին՝ վերջիններիս գործադրած դաժանությունների համար. «Չամայի սպանող² Սիրիայում այլեւս չպետք է կրկնվի: Եթե դա կրկնվի, ապա Սիրիայի համար դժվար կլինի վերացնել դրա հետեւանքները, իսկ միջազգային հանրությունն անպայմանորեն կասի իր հստակ խոսքը: Մենք չենք ցանկանում, որ Սիրիան պառակտվի ու մասնատվի, քանի որ դա կվնասի նաեւ թուրքիային»: Էրդողանի այդ խոսքերը բավական զայրացրին սիրիական կողմին. Սիրիայում թուրքիայի դեսպան Օմեր Օնիոնը կանչվեց արտգործնախարարություն՝ պարզաբանումներ տալու:

Մայիսի 14-ին Էրդողանը Ռիզեում հայտարարեց, որ Սիրիան Լիբիա չէ, Սիրիան թուրքիայի հետ ունի 800-900 կիլոմետրանոց սահման, Սիրիայի հարցը գործնականում վերածվել է թուրքիայի ներքաղաքական խնդրի, ինչի համար էլ ցանկանում է, որ Սիրիան հնարավորինս արագ դուրս գա այդ խնդրահարույց իրավիճակից: Բացի այդ, նա նշեց, որ Ասադի հեռանալը վաղաժամ է համարում՝ հույս հայտնելով, որ, չնայած ուշացմանը, Ասադը կիրագործի անհրաժեշտ բարեփոխումները, հակառակ դեպքում Սիրիայում ներքաղաքական իրավիճակն առավել կսրվի, կսկսվեն միջկրոնական բախումներ, իսկ երկիրը կպառակտվի:

Մայիսի 25-ին թուրքական «Միլլիյեթ» թերթը, վկայակոչելով Իսրայելի կառավարությանը մոտ կանգնած «Դեբկա» հետախուզական կայքը, գրեց. «Վերջին օրերին թուրքիան կտրուկ փոխել է դիրքորոշումն Ասադի ռեժիմի հանդեպ եւ սկսել է երես թեքել Սիրիայի հետ համագործակցությունից: Ասադն արագորեն կորցնում է Էրդողանի ու մուսուլմանական աշխարհի աջակցությունն ու համբերությունը: Թուրքիան մուսուլմանական ժողովրդավար երկիր է, եւ չի կարող աջակցել բռնապետերին, ովքեր դաժանորեն սպանում են իրենց քաղաքացիներին: Էրդողանը կառավարության ներկայացուցիչների հետ դռնփակ հանդիպման ժամանակ նույնիսկ հրահանգել է կարճ ժամանակահատվածում խզել Դամասկոսի հետ հարաբերությունները»:

Յունիսի 1-ին Անթալիայում հավաքվեցին սիրիացի ընդդիմադիրները՝ քննարկելու իրենց երկրում տիրող իրավիճակը: «Սիրիայում փոփոխու-

թյունների օգտին» խորագրով կոնֆերանսում սիրիացի ընդդիմադիրները հայտարարեցին, որ երկիրը կարիք ունի ռեժիմի փոփոխման եւ ոչ թե համաներման³, ինչի համար էլ Ասադը պետք է հեռանա եւ կանգնի դատարանի առջեւ: Դա լինելու է իրենց պայքարի առաջին փուլը: Բացի այդ, սիրիացի ընդդիմադիրները համաձայնության եկան հետագա երեք կետերի շուրջ. երկրի ներսում ուժի ու բռնության կիրառման վերացում, օտար միջամտության դեմ պայքար, քաղաքացիական (ժողովրդավարական) Սիրիայի ստեղծում:

Ասկայն մաներելու տեղ ունենալու համար Թուրքիան, Ասադի հակառակորդների այդ հավաքին զուգահեռ, նույն Անթալիայում (Facebook-ով հրավերներ առաքելու միջոցով) նախաձեռնեց նաեւ Ասադի կողմնակիցների հավաքը, որոնք ժամանեցին Սիրիայից ու Անթաքիայից եւ իրենց դժգոհությունը հայտնեցին Անթալիայում սիրիացի ընդդիմադիրների հավաքվելու կապակցությամբ: Սրա համար պաշտոնական Անկարան մեղադրվեց երկերեսանի քաղաքականություն վարելու մեջ, ինչին արդեն իսկ ականատես ենք եղել Լիբիայի պարագայում:

Այն բանից հետո, երբ մայիսի 27-ին Դովիլում կայացած «Մեծ ութնյակի» գագաթաժողովում ընդունված ամփոփիչ փաստաթղթում նշվեց, որ Քադաֆին պետք է հեռանա, իսկ Ասադը՝ ոչ (նրան ընդամենը կոչ արեցին բարեփոխումներ անցկացնել եւ ոչ թե հեռանալ), Թուրքիան անմիջապես փոխեց իր դիրքորոշումը Սիրիայի նկատմամբ: Արդեն դրա հաջորդ օրը՝ մայիսի 28-ին, Չաթայ նահանգում էրդողանը հայտարարեց. «Սիրիացի եղբայրների ցավը մեր ցավն է, եւ որպեսզի այդ ցավն անտանելի չդառնա, անհրաժեշտ է, որ Սիրիայում իշխեն խաղաղությունն ու կայունությունը»: Իսկ հունիսի 3-ին Դավութօղլուն հայտարարեց, որ Անկարան Դամասկոսին միայնակ չի թողնի:

Այդ ամենի արդյունքում, մեկ-երկու օրում թուրքական սահմանը հատեց ավելի քան հազար սիրիացի փախստական, որով եւ Չաթայում ստեղծված «վրանային քաղաքում» նրանց թիվը հասավ մոտ 1650-ի: Եվ եթե ապրիլի վերջին Դավութօղլուն սիրիացի փախստականների կողմից թուրքական սահմանի հատման համար կիսատ էր թողնում իր գործերը եւ բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ հրատապ նիստ գումարում, ապա այս դեպքում էրդողանը հայտարարեց, որ իրենք իրենց դռները չեն փակի սիրիացի փախստականների առջեւ:

Մայիսի 30-ին բրիտանական The Independent պարբերականի՝ Մերձավոր Արեւելքի գծով փորձագետ Ռոբերտ Ֆիսկը գրեց. «Սիրիայում քաղաքացիական պատերազմ սկսվելու դեպքում, գաղթականների մեծ ներհոսքը կանխելու համար՝ Թուրքիան պատրաստվում է ներխուժել

Սիրիա եւ ստեղծել անվտանգության գոտի: Թուրքիան զայրացած է Ասադի վրա, քանի որ նա երկու անգամ խոստացել է բարեփոխումներ իրականացնել, սակայն դժեւ է խոստումը:

Այժմ թուրքական կառավարությունը Սիրիա ներխուժելու եւ անվտանգության գոտի ձեւավորելու գաղտնի պլան է մշակել, ինչու մեծ դեր է խաղում քրդական գործոնը: 1991 թվականի Պարսից ծոցի պատերազմի ժամանակ Թուրքիա էին գաղթել մեծ թվով իրաքյան քրդեր: Այժմ այդ իրավիճակը կարող է կրկնվել Սիրիայի պարագայում: Դա կանխելու համար Թուրքիան պատրաստ է մի քանի գումարտակ ուղարկել Սիրիա եւ անվտանգության գոտի ձեւավորել»:

Հունիսի 11-ին այդ մասին արդեն գրեց թուրքական «Ռադիկալ» թերթը. «Թուրքական իշխանությունները սիրիացի փախստականների աճող հոսքի դեմն առնելու համար պատրաստվող «Ճանապարհային քարտեզի» շրջանակներում դիտարկում են հարեւան երկրի տարածքում բուժերային գոտու ստեղծման տարբերակը: Սակայն դա կարող է տեղի ունենալ այն դեպքում, եթե սիրիացի փախստականների թվաքանակը գերազանցի 10.000-ը: Ներկայումս Հաթայում ստեղծված «վրանային քաղաքներում» գտնվում է ավելի քան 4000 մարդ:

Եթե փախստականների թվաքանակը գերազանցի 10.000-ը, ապա Թուրքիան միայնակ չի կարող կրել այդ ծանր բեռը եւ ստիպված կլինի դիմել միջազգային կառույցների օգնությանն ու համագործակցությանը: Խոսքն առաջին հերթին ՄԱԿ-ի ու ԵՄ-ի մասին է: Եթե սիրիացի փախստականների ներհոսքը հիշեցնի տարիներ առաջ տեղի ունեցած իրաքյան համանման դեպքերը, ապա թուրքական իշխանությունների օրակարգում կհայտնվի հարեւան երկրի տարածքում բուժերային գոտի ձեւավորելու հարցը»:

Հարկ է նշել, որ թուրքական իշխանությունները խորապես անհանգստացած են Ասադի ռեժիմի կողմից սիրիական քրդերի հանդեպ ցուցաբերված կոշտ միջոցներից, ինչը կարող է հանգեցնել քրդական ապստամբությանը, որն էլ կարող է բացասականորեն ազդել «թուրքական Քրդստանի» վրա: Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլը հայտարարել էր, որ Անկարայում ուշադիր հետեւում են հարեւան երկրում տիրող իրավիճակին եւ պատրաստ են իրադարձությունների զարգացման վատթարագույն սցենարին:

Գյուլը, սակայն, չի մանրամասնել, թե Թուրքիայի համար որն է սիրիական զարգացումների վատթարագույն սցենարը: Կարելի է կարծել, որ դա մարտի վերջին Երդողանի հայտնած մտավախությունն է, որ եթե Ասադը հեռանա, ապա Սիրիայի քրդերը, Թուրքիայի, Իրանի ու

Հյուսիսային Իրաքի քրդերի հետ միասին, ուղի կկանգնեն եւ միացյալ անկախ պետության պահանջ կդնեն: Այս պլանում թուրքական իշխանությունների համար խիստ անհրաժեշտ է դառնում հարեւան երկրում բուժերային գոտու ստեղծումը, որը սեպի դեր է խաղալու առաջին հերթին Սիրիայի, ինչպես նաեւ Հյուսիսային Իրաքի ու Թուրքիայի քրդերի միջեւ: Դրա համար էլ պատահական չէ, որ բուժերային գոտու տեղանքի վայր է ընտրվել Սիրիայի հյուսիս-արեւելքում ընկած Քամիշլի քաղաքը:

Ինչպես վերը նշվեց, եթե թուրքական սահմանը հատած սիրիացի փախստականների թիվը գերազանցի 10.000-ը, ապա Թուրքիան պատրաստ է ռազմական միջամտության արդյունքում Սիրիայի հյուսիս-արեւելքում ստեղծել բուժերային գոտի: Իսկ ի՞նչ անել, եթե 3 ամիս Սիրիայում ընթացող ժողովրդական հուզումների արդյունքում թուրքական սահմանը հատած սիրիացի փախստականների թվաքանակը հազիվ հասնում է մի քանի հարյուրի:

Ամենայն հավանականությամբ, այս հարցի պատասխանը հունիսի 9-ին տվեց թուրքական «Այդընլըք» թերթը՝ հայտնելով, որ հունիսի 6-ին Սիրիայի հյուսիս-արեւմուտքում (Թուրքիայի սահմանի մոտ) ընկած Ջիսր Ալ-Շուղուր գյուղաքաղաքում լավ սպառազինված ու վարժեցված մի քանի տասնյակ զինյալների կողմից Սիրիայի ուժային կառույցների 120 աշխատակիցների սպանությունը ղեկավարել է MIT գործակալ Սուրի Ռըդվան Համուդին: Ի դեպ, շատերն այդ միջադեպը շրջադարձային են համարում սիրիական ավելի քան 11-շաբաթյա հակամարտության ընթացքում, քանի որ դա հանդիսանում է այդ ժամանակահատվածում գրանցված ամենաարյունալի բախումը: Իսկ հունիսի 12-ին սիրիական «Սանա» պետական գործակալությունը հայտնեց, որ Ջիսր Ալ-Շուղուրում ձերբակալվել են Թուրքիայից Սիրիա ներթափանցած գրոհայինների երկու խմբեր, որոնց մոտ հայտնաբերվել են թուրքական հեռախոսաքարտեր, կապի միջոցներ, գումար: (Այս առումով, զարմանալի չէր, որ հունիսի 13-ին Ասադի մոտ 2000 կողմնակիցներ հարձակում գործեցին Դամասկոսում Թուրքիայի դեսպանատան վրա):

Դա անմիջապես հանգեցրեց նրան, որ սիրիական բանակը, ինչպես եւ սպասվում էր, սկսեց պատասխան պատժիչ գործողություններ կիրառել՝ հայտնվելով թուրքական սահմանին, ինչը թուրքական լրատվամիջոցները որակեցին որպես «շոկային»: Արդյունքում՝ արդեն հունիսի 11-ի դրությամբ Հաթայի «վրանային քաղաքներում» կար 3893 սիրիացի փախստական, որոնք գտնվում են թուրքական անվտանգության ուժերի խիստ վերահսկողության ներքո, քանի որ մտավախություն կա, որ փախստականների հետ միասին Թուրքիա կարող են ներթափան-

ցած լինել նաև զինված անձինք եւ մասնավորապես PKK զինյալները:

Թերեւս, նաև այդ պատճառով էր, որ Էրդողանն ու Դավութօղլուն սկսեցին պատրաստակամութիւն հայտնել սիրիացի փախստականներին ընդունելու համար՝ բոլորին ի ցույց դնելով իրենց «մարդասիրութիւնը»: Ուշագրավ է նաև Հաթայում եւս 5000 սիրիացի փախստականի համար երրորդ «վրանային քաղաքի» ստեղծումը:

Պետք է նշել, որ թուրքական իշխանութիւններն առավել են հակվում այն տարբերակին, որ Ասադի հեռանալու հնարավորութիւնները մեծանում են, եւ որ այդ դեպքում քրդերը կարող են բավական ակտիվանալ, ինչի համար էլ պահանջվում է արագացնել բուֆերային գոտու ձեւավորման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծման գործընթացը: Բացի այդ, թուրքական իշխանութիւնները հասկանում են, որ լիբիական առաջնորդ Քադաֆիի «ողիսականը» մոտենում է ավարտին, եւ Արեւմուտքի (ԱՄՆ) ուշադրութիւնը դրանից հետո բեւեռվելու է Ասադի վրա:

Սակայն, ի տարբերութիւն Լիբիայի, Սիրիայում արեւմտյան ռազմական միջամտութեանը կտրականապես դեմ են հանդես գալիս Թուրքիան, Ռուսաստանն ու Իրանը: Հունիսի 9-ին Դավութօղլուն NTV հեռուստաալիքին տված հարցազրույցի ժամանակ հայտարարեց. «Սիրիայում դեռեւս պայմաններ չեն ստեղծվել օտար ռազմական միջամտութեան համար: Եթե Սիրիան արագացնի բարեփոխումների գործընթացը եւ վերահսկի իրավիճակը, ապա դրա կարիքն ընդհանրապես չի զգացվի: Օտար ռազմական միջամտութիւնը բացասաբար կանդրադառնա Սիրիային սահմանակից երկրների վրա»: Սիրիան արաբական աշխարհում Ռուսաստանի գրեթե միակ դաշնակիցն է: Իրանն իր հերթին քաջ գիտակցում է, որ Սիրիայում օտար ռազմական միջամտութեան արդյունքում կհայտնվի լիակատար մեկուսացման մեջ՝ Աֆղանստանից մինչեւ Իրաք ընկած տարածքում: Պաղեստինցի քաղաքագետ Թահսի Հալաբիի կարծիքով՝ Սիրիան Մերձավոր Արեւելքի այն բացառիկ երկիրն է, առանց որի հետ դաշինքի՝ Թուրքիան, Իրանը կան Եգիպտոսը չեն կարող հանդիսանալ տարածաշրջանային երկրներ:

Հունիսի 12-ի խորհրդարանական ընտրութիւններում ԱԶԿ հանոզիչ հաղթանակը կարող է Էրդողանին մղել առավել գործուն քայլերի: Մինչեւ ընտրութիւններն Էրդողանի համար ցանկալի չէր համարվում ռիսկային գործընթացներում ներգրավվելը կամ համապատասխան հայտարարութիւններ հնչեցնելը, ինչը կարող էր բացասականորեն ազդել նրա վարկանիշի վրա: Մինչդեռ խորհրդարանական ընտրութիւններում տարած հաղթանակն արտաքին քաղաքական դաշտում նրան ավելի վստահ է դարձնում:

¹ Մարտի վերջին հնգօրյա «հույժ գաղտնի» այցով Թուրքիա ժամանեց Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՉՎ) ղեկավար Լեոն Պանետան, որն Անկարայում հանդիպումներ ունեցավ իր թուրք գործընկեր Չաքան Ֆիդանի, ինչպես նաև կառավարության ու Գլխավոր շտաբի ներկայացուցիչների հետ: Դրանց ընթացքում նշվել է, որ Սիրիայում տիրող իրավիճակը մոտեցել է ճգնաժամային սահմանագծին, իսկ այդ երկրում առկա ժողովրդական շարժումը կրում է սուննի բնույթ: Թուրքական կողմը Սիրիայի վերաբերյալ ներկայացրել է մի շարք առաջարկներ (այսպես կոչված՝ «Գաղտնի կող»), որոնք առնչվում էին նաև Սիրիայում իշխանափոխությանը եւ այդ դեպքում Բաշար Ասադի ընտանիքի անվտանգության երաշխիքներին:

² 1982 թվականին իշխանությունները հողին հավասարեցրին «Մուսուլման եղբայրների» հենակետ դարձած Չամա քաղաքը՝ արմատախիլ անելով կրոնա-քաղաքական ընդդիմությունը:

³ Մայիսի 31-ին Ասադը ստորագրեց համաձայնագրի հրամանը, իսկ հունիսի 2-ին Էրդողանը հայտարարեց, թե համաձայնումից երկու օր առաջ զանգահարել է Ասադին եւ, ինչպես եղբայրը եղբորը, խորհուրդ տվել համաձայնում արձակել:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՉԵՐՔԵԶՆԵՐԻ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ռուբեն Մելքոնյան

Օսմանյան կայսրությունը բազմազգ եւ բազմէթնիկ պետություն էր, որտեղ, սակայն, ոչ թուրք ժողովուրդներին պարտադրված էր իրենց ինքնությունը մոռանալու եւ թուրքանալու ճանապարհը: Ընդ որում՝ թուրքացման քաղաքականությունը չէր վերաբերում միայն քրիստոնյաներին, այլեւ տարատեսակ մեթոդներով կիրառվում էր նաեւ իսլամադավան ժողովուրդների նկատմամբ: Թուրքիայի Հանրապետությունը ոչ միայն ժառանգեց, այլեւ նոր թափով շարունակեց այդ քաղաքականությունը, որը 20-րդ դարում ստացավ նաեւ որոշակի իրավական ձեւակերպում: Այսպես, 1923թ. Լոզանի պայմանագրով Թուրքիայի Հանրապետությունը ճանաչեց փոքրամասնությունների ընդամենը երեք համայնք՝ հայկականը, հունականը եւ հրեականը, իսկ շուրջ չորս տասնյակի հասնող այլ ժողովուրդներ եւ էթնոկոոնական խմբեր, ինչպիսիք են, օրիմակ, ասորիները, լազերը, քրդերը, չերքեզները եւ այլն, չստացան առանձին իրավունքներ ու կարգավիճակ:

Թուրքացման քաղաքականությունը ցայտուն կերպով կիրառվեց Թուրքիայի տարածքում բնակվող բոլոր իսլամադավան ժողովուրդների վրա, սակայն քրդերի պարագայում այն հանդիպեց հակազդեցության, որը երբեմն վերածվեց զինված պայքարի, ինչպիսիք էին 20-րդ դարի առաջին կեսի քրդական ապստամբություններն ու խռովությունները: Հայտնի է, որ թուրքական պաշտոնական թեզն ի սկզբանե չէր ընդունում քրդերի՝ որպես առանձին էթնոսի գոյության փաստը եւ սահմանում էր, որ քրդերը պարզապես «լեռնային թուրքեր» են: Այսօր արդեն քրդական խնդիրը Թուրքիայում հասել է այն մակարդակի, որ թուրքական պետությունը ոչ միայն ընդունում է քուրդ ժողովրդի գոյությունը, այլեւ տրամադրում է տարատեսակ իրավունքներ, իսկ քրդական որոշակի շրջանակներ հետզհետեւ ավելի բացահայտ են խոսում ինքնավարության մասին:

Թուրքիայում քրդերից հետո ամենամեծաթիվ իսլամադավան ժողովուրդը չերքեզներն են: Հայտնի է, որ 19-րդ դարի կեսերին Ռուսաստանից Օսմանյան կայսրություն են գաղթել հյուսիսկովկասյան ժողովուրդներ, որոնց Թուրքիայում ընդունված է անվանել չերքեզներ: Օսմանյան իշխանությունները, ընդունելով մուսուլման չերքեզներին, անմիջապես նրանց օգտագործել են իրենց ժողովրդագրական եւ քրիստոնյաներին

բռնաճնշումների ենթարկելու քաղաքականության մեջ: Չերքեզներին հիմնականում հատկացվել են քրիստոնյաներով բնակեցված տարածքներ՝ նպատակ ունենալով առավել մուսուլմանական ժողովրդագրական պատկեր ստեղծել: Չերքեզները լուրջ դեր եւ դիրք են ստանձնել թուրքական ռազմական համակարգում, եւ, ի վերջո, չպետք է անտեսենք նաեւ այն փաստը, որ չերքեզները գործում մասնակցություն են ունեցել Չայոց ցեղասպանության իրականացման գործում:

Այսօր Թուրքիայում, ըստ տարբեր աղբյուրների, չերքեզների թիվը տատանվում է 3-5 միլիոնի շուրջ, սակայն մասնագետներն առավել իրատեսական են համարում 3 միլիոնը: Հանրապետական Թուրքիայում եւս չերքեզներն ընդգրկված են ռազմական, ինչպես նաեւ քաղաքական ոլորտներում: Նրանց շարքում հանդիպում են նաեւ բարձրաստիճան զինվորականներ եւ պետական համակարգի պաշտոնյաներ:

Այսօր Թուրքիայում ծավալվող ինքնության խնդիրը չի շրջանցում նաեւ չերքեզներին, եւ այդ ուղղությամբ տեղի են ունենում որոշակի զարգացումներ: Այսպես, վերջերս «Չերքեզների իրավունքների նախաձեռնություն» հասարակական կազմակերպությունն Անկարայում անցկացրել էր չերքեզների բողոքի ցույց, որի հիմնական նպատակն էր բարձրացնել չերքեզներին հուզող տարատեսակ խնդիրներ, որոնց մեջ առաջնային էր «չերքեզական ինքնության պահպանման հարցը»: Որպես ինքնության պահպանման հիմնական գրավական կազմակերպիչները տեսնում են իրենց մայրենի լեզվի՝ չերքեզերենի խնդիրը, որի շուրջ էլ ներկայացնում էին կոնկրետ պահանջներ: Այսօր Թուրքիայում չերքեզների միայն 10 տոկոսն է տիրապետում չերքեզերենին եւ այն էլ՝ ավագ սերունդը: Ուշադրության արժանի էին այդ բողոքի ցույցի հիմնական պաստառկարգախոսները՝ «Պահանջում ենք կրթություն չերքեզերենով», «Լեզուն կորցնողը կկորցնի ամեն ինչ», իսկ այդ միջոցառման ընդհանուր խորագիրը հետեւյալն էր՝ «Կեցցե չերքեզ մնալու մեր պայքարը»: Չերքեզների պահանջների մեջ կարեւոր տեղ է զբաղեցնում նաեւ իրենց մայրենիով հեռուստատեսությունն եւ ռադիո ունենալու խնդիրը, որը, նրանց կարծիքով, նպաստելու է լեզվի՝ չերքեզերենի պահպանմանը:

«Չերքեզների իրավունքների նախաձեռնության» կառավարման խորհրդի անդամ Քենան Քափլանը հայտարարել է. «Մենք շատ ենք սպասել այն օրերին, երբ Թուրքիայում գրքերում տեղ կգտնեն մեր պատմությունը, մշակույթը, լեզուն, մեր մայրենիով գրքեր կկարդանք»: Ուշագրավ է, որ չերքեզները, բարձրաձայնելով իրենց խնդիրների մասին, հստակ ակնարկում են քրդական հարցի նկատմամբ Թուրքիայի կառավարության ուշադրությունը՝ նշելով. «Այս երկրում պետք է հաշվի առնվեն

ոչ միայն նրանց իրավունքները, ովքեր շատ են աղմկում, այլև մյուս ժողովուրդներինը նույնպես»:

Ինչպես եւ սպասելի էր, Թուրքիայում արդեն մուսուլման փոքրամասնության կողմից բարձրացվող այս նոր խնդրի հանդեպ անմիջապես ձեւավորվեց հակազդեցություն, եւ մի շարք անձինք հանդես եկան «Չերքեզների իրավունքների նախաձեռնության» քննադատությամբ: Մասնավորապես՝ բավական կտրուկ հայտարարություններ արեց Թուրքիայում հայտնի հրապարակախոս եւ ուսումնասիրող Մուրադ Բարդաքչըն, որը հենց ինքն էլ ծագունով չերքեզ է: Խոսելով չերքեզների անցկացրած բողոքի ցույցի եւ պահանջների մասին՝ Բարդաքչըն հայտարարել է. *«Մեզ հիմա հենց միայն չերքեզական նախաձեռնություն էր պակաս»:* Անդրադառնալով Ռուսաստանից չերքեզների գաղթին՝ նա նշել է, թե դա տեղի է ունեցել *«ռուսական թրից փրկվելու համար»*, եւ ի տարբերություն ռուսների, թուրքերը գրկաբաց են ընդունել չերքեզներին: Թվարկելով տարբեր ոլորտներում բարձր դիրքերի հասած չերքեզներին՝ Բարդաքչըն չերքեզների մայրենի լեզվի պահպանմանն ուղղված այսօրվա պահանջները համարում է *«ապերախտություն Թուրքիայի հանդեպ»:* Չերքեզերենի կորստի համար եւս, ըստ Բարդաքչընի, մեղավոր է ոչ թե թուրքական պետությունը, այլ հենց իրենք՝ չերքեզները, որ չեն կարողացել սերնդեսերունդ փոխանցել լեզուն: Ուշագրավ է, որ Բարդաքչըն կոչ է անում դժգոհ չերքեզներին հեռանալ Թուրքիայից եւ իրենց իրավունքները պահանջել Ռուսաստանից: *«Ավագ սերունդը բազմաթիվ հիշողություններ ունի «մարդասպան ցարի», «դավաճան Մոսկվայի» եւ «վայրի Սիբիրի» մասին: Եթե այդքան ուժերդ պատում է, ուրեմն գնացեք եւ Ռուսաստանից ձեր իրավունքները պահանջեք»:*

Հետաքրքիր է, որ այս հարցը ծավալվելով՝ արդեն վերածվել է հենց չերքեզների միջեւ բանավեճի, որի ժամանակ ի հայտ են գալիս բավական հետաքրքիր փաստեր: Մասնավորապես՝ չերքեզ հրապարակախոսներ Յաշար Գյուլվենը եւ Ֆուաթ Ուղուրը հակադարձեցին Բարդաքչընի հայտարարություններին: Խոսելով Օսմանյան կայսրությունում եւ Թուրքիայի Հանրապետությունում բարձր պաշտոնների հասած չերքեզների մասին՝ նրանք նշեցին, որ այդ մարդիկ պաշտոններ են զբաղեցրել ոչ թե որպես չերքեզներ, այլ թուրքեր, այսինքն՝ չերքեզական ինքնությունն այդ հարցում լիովին անտեսված է, եւ ընդհանրապես՝ չերքեզներն իրենց իրական ինքնությամբ ոչ մի իրավունքի տեր չեն կանգնել: *«Երբ մենք պայքարում էինք այս երկրի ստեղծման համար, մեր կյանքն ու արյունն էինք տալիս, այն ժամանակ թուրքերեն անգամ չգիտեինք, իսկ հիմա մոռացել ենք մեր մայրենին»*,– պնդում է Ֆուաթ Ուղուրը:

Չերքեզների փոխադարձ մեղադրանքների գործընթացին միջամտեց նաեւ «Կովկասյան միությունների դաշնության» նախագահ Ջիհան Ջանդեմիրը՝ ընդունելով, որ չերքեզների գաղթն Օսմանյան կայսրություն ունեցել է նաեւ հակաքրիստոնեական ժողովրդագրական պատճառ: Նա նշել է, որ թուրքական իրականությունում գործադրվել եւ ներկայումս էլ շարունակվում է թուրքացման քաղաքականություն, որն ազդել է նաեւ մուսուլման ժողովուրդների վրա: Մասնավորապես՝ այդ քաղաքականության ազդեցության տակ շատ չերքեզներ սկսել են թաքցնել իրենց ինքնությունը, չկիրառել չերքեզական անձնանուններ, չխոսել չերքեզերեն:

Յետաքրքիր է, որ չերքեզական թեմայի քննարկումների ժամանակ ուղղակի անդրադարձ արվեց նաեւ հայկական խնդրին եւ մասնավորապես այն հարցին, թե ինչ դերակատարում են ունեցել չերքեզները Յայոց ցեղասպանության ժամանակ: Վերոհիշյալ չերքեզ մտավորականներ Ֆուաթ Ուղուրը եւ Յաշար Գյուլբենն անգամ միացել են «Ներողություն ենք խնդրում հայերից» ստորագրահավաքին: Չժխտելով չերքեզների մասնակցությունը Յայոց ցեղասպանությանը՝ նրանք, միեւնույն ժամանակ, ընդհանրացնող հայտարարություններ են անում եւ փորձում «մեղմացնող» հանգամանքներ գտնել իրենց նախնիների արարքներում. *«Չերքեզների մեջ կան նաեւ կոտորածներից փրկված հայեր: Կեսարիայում եւ շրջակա գյուղերում կան 1915-ին մահից փրկված, չերքեզական գյուղերում իրենց կյանքը շարունակած, չերքեզացած հայեր»*: Իհարկե, այս պնդումը չափազանց թույլ է, քանի որ խոսքը կարող է վերաբերել առավելապես այն հայ կանանց, որոնց չերքեզներն առեւանգել եւ բռնի իսլամացրել են, ու նրանք այդուհետ ստիպված ապրել են որպես չերքեզներ. այսինքն՝ «չերքեզացած հայերն» իրականում Յայոց ցեղասպանության ժամանակ բռնությամբ խլված հայուհիներն են:

Ամփոփելով՝ նշենք, որ չերքեզների շրջանում սկսված եւ ծավալվող գործընթացը բավական հետաքրքիր է թուրքիայում ինքնության խնդրի զարգացման համատեքստում եւ ցույց է տալիս, որ բռնությամբ ստեղծված «միատարր» թուրքիայի գաղափարը, ըստ էության, չի հասել լիակատար հաջողության: Միեւնույն ժամանակ, կարելի է ենթադրել, որ թուրքական իշխանությունները մտավախություն ունեն, թե չերքեզների պահանջների բավարարման դեպքում նույնանման պահանջներ կարող են բարձրացնել լազերը, իսլամացված վրացիները (գյուրջու) եւ այլ փոքրամասնություններ:

ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԸ

Արտաշես Տեր-Չարությունյան

Իսրայելի շուրջ անվտանգության միջավայրի փոփոխությունը

Մայիսի վերջին Իսրայելի պաշտպանության նախարար Էհուդ Բարաքը հանդես եկավ հայտարարությամբ, որն անմիջապես գրավեց մերձավորարեւելյան խնդիրներով զբաղվող փորձագետների ուշադրությունը: Բարաքը հայտարարեց, թե յուրաքանչյուր տարի Իսրայելի կողմից կատարվող ռազմական հատկացումներից¹ զատ, առաջիկա հինգ տարիների ընթացքում անհրաժեշտ է նաեւ առնվազն \$20 մլրդ, որպեսզի «գալիք սերնդի ընթացքում երկիրը եւս պաշտպանված լինի»:

Էհուդ Բարաքի այդ հայտարարությունը հնչեց Իսրայելում շարունակվող քննարկումների ֆոնին, թե ինչ ազդեցություն կունենան արաբական հեղափոխությունները հրեական պետության անվտանգության վրա: Չարքը տարածաշրջանով ու Իսրայելի անվտանգությամբ զբաղվող հրեա փորձագետների վերջին մի քանի շաբաթների հրապարակումների ուշադրության կենտրոնում է: Եվ ի տարբերություն ամերիկյան ու եվրոպական շատ գնահատականների, Իսրայելում ամենեւին էլ ոգելորված չեն «արաբական գարունով»²:

Եթե փորձենք ի մի բերել, ապա գերիշխող միտքը հետեւյալն է. վերջին մոտ երեք ու կես տասնամյակի ընթացքում հրեական պետությունը զերծ է մնացել լայնածավալ ռազմական ագրեսիայից ու հնարավորություն է ունեցել զարգանալու, քանի որ հարակից երեք երկրներում՝ Եգիպտոսում, Սիրիայում ու Չորդանանում գործող վարչակազմերը շահագրգռված են եղել կամ անուղղակի նպաստել են Իսրայելին ձեռնտու ռազմաքաղաքական status quo-ի պահպանմանը³: Եվ այժմ՝ Եգիպտոսում Մուբարաքի վարչակազմի տապալումը, Սիրիայում ալ-Ասադների իշխանության դեմ ընդլայնվող հուզումները, որոնք աստիճանաբար ձեւափոխվում են զինված ապստամբության, եւ Չորդանանում թագավորող Չաշեմիտների դինաստիայի, փաստորեն, ստիպողական քայլերը՝ ընդդիմությանն ընդառաջ⁴, իրավիճակ են փոխում: Վերջին մի քանի տասնամյակներում լինելով գործող վարչակարգերին ընդդիմադիր հիմնական ուժը՝ իսլամիստները ներկայում հնարավորություն են ստացել առաջնորդել ժողովրդական լայն զանգվածներ եւ ազդել քաղաքական որոշումների վրա:

Հրեական պետության անվտանգության տեսանկյունից վերոհիշյալն ունի ռազմավարական նշանակություն, քանզի նշված երկրներում իսլամիստների ազդեցության մեծացման արդյունքում քեմփոփեիդյան պայմանավորվածությամբ ձեւավորված տարածաշրջանային ռազմա-քաղաքական status quo-ն հայտնվում է վտանգի տակ:

Այդ առումով, Իսրայելում, օրինակ՝ առանձնացնում են պաղեստինյան հարցում Եգիպտոսի քաղաքականության փոփոխությունը, որը տեղի ունեցավ Չոսնի Մուբարաքի տապալումից կարճ ժամանակ անց: Ապրիլի 27-ին Կահիրեում կայացած համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ պաղեստինյան «Ֆաթհ» ու «Համաս» խմբավորումների ներկայացուցիչները հայտարարեցին իրենց տարածայնությունները «մի կողմ դնելու» եւ միասնական կառավարություն կազմելու մասին՝ «նպատակ ունենալով ութ ամսից անցկացնել համապետական ընտրություններ»: Հասկանալի է՝ միմյանց թշնամի խմբավորումների այդ քայլը տեղի ունեցավ Եգիպտոսի աջակցությամբ: Արդեն հաջորդ օրը՝ ապրիլի 28-ին, Եգիպտոսի արտգործնախարար Նաբիլ էլարաբին «Ալ-Ջազիրա» հեռուստաընկերության եթերում «ոչ պատվաբեր» անվանեց Մուբարաքի վարչակազմի վարած քաղաքականությունը Գազայի հատվածի կապակցությամբ: Էլարաբիի հայտարարությունից մեկ ամիս անց՝ մայիսի 28-ին, Եգիպտոսը բացեց Գազայի հատված տանող «Ռաֆահ» անցակետը, որը փակվել էր 2007թ.՝ Գազայում «Համաս» շարժման իշխանության գալուց հետո: Եվ վերջապես, հունիսի սկզբին՝ պատմության մեջ առաջին անգամ, Եգիպտոսի իշխանությունները թույլ տվեցին, որ Եգիպտական «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության պատվիրակությունը մեկնի Գազա ու այնտեղ հանդիպումներ ունենա «Համաս» շարժման ղեկավարության հետ:

Թեև Ավիվում գործող Ազգային անվտանգության հետազոտությունների ինստիտուտի (The Institute for National Security Studies–INSS) վերլուծություններից մեկը հետևություն է անում. եթե տեսանելի հեռանկարում Եգիպտոսում կան Իսրայելին հարակից արաբական այլ երկրներում իսլամիստական ուժերն անգամ չզան իշխանության, այդ երկրները կառավարող վարչակարգերն իրենց ներքին ու արտաքին քաղաքականություններում առաջիկայում հարկադրված են լինելու ընդառաջ գնալ իսլամիստներին՝ հաշվի առնելով վերջիններիս աճող ազդեցությունը հասարակական-քաղաքական հարաբերություններում:

Վերադառնանք, սակայն, Էիուդ Բարաքի հայտարարությանը: Ըստ ամենայնի, Իսրայելի պաշտպանության նախարարի այդ խոսքերը վկայում են, որ տարածաշրջանային վերոհիշյալ զարգացումների ֆոնին հրեական պետության ռազմաքաղաքական վերնախավն արդեն հանգել

է որոշակի հետեւությունների, իսկ հայտարարության նպատակն էլ դա ի ցույց դնելն է: Եթե այդպես է, ապա հայտարարությունը պետք է նաեւ վկայի, որ մերձավորարեւելյան հնարավոր փոփոխություններին ընդառաջ՝ ռազմական նախապատրաստություններից զատ, Իսրայելի կողմից կլինեն նաեւ արտաքին քաղաքական նախաձեռնություններ:

Գործընկեր-պետությունների հետ հարաբերությունների հարցը

Նոր իրավիճակը Մերձավոր Արեւելքում անդրադառնում է նաեւ Իսրայելի անվտանգության համար կարեւոր նշանակություն ունեցող մյուս ասպեկտի՝ գործընկեր-պետությունների հետ հարաբերությունների վրա:

Այդ առումով, առաջինը Թուրքիայի հետ հարաբերություններում երեւան եկած նոր իրողություններն են: Իհարկե, իսրայելա-թուրքական հարաբերություններում ծագած հակասությունների պատճառը պայմանավորված չէ «արաբական գարունով» ու նախեսառաջ կապված է իսլամական աշխարհում ազդեցիկ դերակատարություն ստանձնելու Անկարայի նպատակների հետ, սակայն արաբական հեղափոխությունները նոր հնարավորություն են ստեղծում թուրքական քաղաքականության համար, եւ Անկարայում, ըստ ամենայնի, որոշել են օգտվել դրանից:

Հունիսի սկզբին ոչ առանց արեւմտյան հատուկ ծառայությունների եւ Թուրքիայի Ազգային հետախուզական ծառայության (թուրք.՝ Milli Istihbarat Teskilati – MIT) աջակցության Անթալիայում տեղի ունեցավ Սիրիայում իշխող ալ-Ասադների վարչակարգին ընդդիմադիր ուժերի հավաք, որի նպատակն էր Լիբիայի օրինակով ստեղծել ընդդիմադիր միասնական մի կառույց: Հունիսի 6-ին, երբ Սիրիայի հյուսիսում գտնվող՝ Թուրքիային սահմանակից, սուննիաբնակ Ջիսր ալ-Շուղուր քաղաքում հակակառավարական բողոքի ակցիաները վերաճեցին զինված ապստամբության, անգամ սիրիական աղբյուրները գրեցին Բաշար Ասադին հավատարիմ զորամիավորումների դեմ մարտնչող թուրքական ծագմամբ զինյալների մասին: Նշված քաղաքում ստեղծված իրավիճակի լրջության մասին էր խոսում այն, որ Դամասկոսը կարողացավ միայն մեկ շաբաթվա ընթացքում ճնշել ապստամբությունը՝ հյուսիս տեղափոխելով բանակի էլիտար զորամիավորումներ: Սակայն ինչն է ուշագրավ. այդ ամենից հետո՝ հունիսի 13-ին, Սիրիայի մայրաքաղաքում գտնվող Թուրքիայի դեսպանատան վրա հարձակում գործեց իշխանամետ մոտ երկու հազար ցուցարարներից բաղկացած ամբոխը. դժվար թե Սիրիայում նման միջադեպ տեղի ունենար առանց իշխանությունների հավանության:

Ինչեւէ, Թուրքիայի ներգրավվածությունը սիրիական գործերին պարզորոշ ցույց է տալիս Անկարայի շահագրգռվածությունը՝ հանդես գալ արաբական երկրներում (հնարավոր է նաեւ ողջ իսլամական աշխարհում) վեր բարձրացող նոր ուժերի կողքին, աջակցել նրանց ու հետեւաբար՝ ազդեցություն ունենալ նրանց վրա: Իսրայելական տեսանկյունից Թուրքիայի այդ քաղաքականությունը տանում է Թել Ավիվ–Անկարա հակասությունների խորացմանը, քանի որ, ինչպես նշեցինք վերը, Իսրայելում գտնում են, թե այդ նոր ուժերի գերակշիռ մասն ունի իսլամիստական օրակարգ: Թեւեւ այսպիսի կարծիքներ դեռ բացահայտ չեն հնչում, սակայն իսրայելական լրատվամիջոցներում հրապարակվող վերլուծականներում արդեն իսկ կարելի է նկատել ակնարկներ, որ թուրքական տարածաշրջանային քաղաքականության մեջ առկա միտումի պահպանման դեպքում, արդեն ոչ հեռավոր ապագայում Անկարան հանդիսանալու է Իսրայելի հիմնական հակառակորդներից մեկը, որը, սակայն, միաժամանակ լավ հարաբերություններ ունի արեւմտյան շատ տերությունների հետ⁵:

Պակաս ուշագրավ չեն Իսրայել–Միացյալ Նահանգներ հարաբերություններում տեղի ունեցող զարգացումները: Մայիսի 19-ին ԱՄՆ Պետքարտուղարությունում մերձավորարեւելյան զարգացումներին վերաբերող իր հայտնի ելույթի ժամանակ Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբաման, խոսելով, արաբա-իսրայելական հակամարտության կարգավորման մասին, հայտարարեց, թե Իսրայելը պետք է վերադառնա 1967թ. սահմաններին, այսինքն՝ պաղեստինցիներին հանձնի Զորդանան գետի Արեւմտյան ափի՝ իր կողմից զբաղեցրած տարածքների մի զգալի մասը, իսկ Սիրիային՝ Գոլանի բարձունքները: Իսկ հունիսի 11-ին իսրայելական «Չաարեց» պարբերականը գրեց, թե ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդի Մերձավոր Արեւելքի ու Զյուսիսային Աֆրիկայի դեպարտամենտի նոր ղեկավար Սթիվ Սայմոնը Վաշինգտոնում հրեական սփյուռքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ հայտարարել է, թե Իսրայելն ունի մեկ ամիս ժամանակ՝ կան այն կընդունի Օբամայի «առաջարկությունը», կան սեպտեմբերին ՄԱԿ Գլխավոր ասամբլեան կձանաչի Պաղեստինը որպես ինքնիշխան պետություն:

Իհարկե, Վաշինգտոնն այդ պահանջն առաջին անգամ չի ներկայացնում Թել Ավիվին, սակայն այս անգամ ամերիկացիների լրջության մասին է վկայում իսրայելական կողմի ու ԱՄՆ հրեական լոբբիի արձագանքը⁶: Բայց գլխավորը, ըստ իսրայելցի դիտորդների, դա չէ: ԱՄՆ մերձավորարեւելյան քաղաքականության մեջ նկատվող փոփոխությունները նրանք բացատրում են «արաբական գարունով», որի պայմաններում Վաշինգտոնում ցանկանում են ամրապնդել իրենց դիրքերն իսլամական աշխարհում՝

առաջ մղելով իսրայելա-պաղեստինյան հաշտության գործընթացը: Այս պարագայում նրանց մտահոգում է հետեւյալը՝ արաբական հեղափոխությունների արդյունքում Մերձավոր Արեւելքը մուտք է գործում հիմնարար փոփոխությունների շրջան, եւ հայտնի չէ, թե նոր իրողությունների պայմաններում ինչպիսին կլինեն Իսրայել–ԱՄՆ հարաբերությունները:

¹ Օրինակ, ըստ Ստոկհոլմի միջազգային խաղաղության հետազոտությունների ինստիտուտի (Stockholm International Peace Research Institute – SIPRI)՝ 2010թ. Իսրայելի ռազմական բյուջեն \$13 մլրդ էր, եւ իր այդ ցուցանիշով հրեական պետությունն աշխարհում զբաղեցնում էր 18-րդ հորիզոնականը:

² «Արաբական գարուն» տերմինը ս.թ. մայիսին մտցրեց ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման՝ նկատի ունենալով արաբական հեղափոխությունները:

³ Ինչպես հայտնի է, 1978թ. սեպտեմբերին Վաշինգտոնից ոչ հեռու գտնվող Քենսի Դեւիդում ԱՄՆ միջնորդությամբ Իսրայելն ու Եգիպտոսը համաձայնություն ստորագրեցին, որի հիման վրա էլ հաջորդ տարի՝ 1979թ. մարտին, Վաշինգտոնում երկու երկրների միջեւ կնքվեց խաղաղության համաձայնագիր: 1994թ. Եգիպտոսի օրինակին հետեւեց Չորդանանը, եւ այդ թվականի հոկտեմբերին կնքվեց իսրայելա-հորդանանյան խաղաղության համաձայնագիրը: Ինչ վերաբերում է Սիրիային, ապա այդ երկրի հետ Իսրայելը վերջին անգամ պատերազմել է շուրջ քառասուն տարի առաջ՝ 1973թ.: 2007–2008թթ. ընթացքում Թուրքիայի միջնորդությամբ երկու երկրներն անգամ գաղտնի բանակցություններ վարեցին՝ հաշտության հասնելու ակնկալիքով, սակայն փորձը ձախողվեց:

⁴ Չորդանանում շարունակվող ընդդիմության բողոքի ակցիաների շարքում ուշադրություն գրավեց հունիսի 3-ին մայրաքաղաք Ամանում ուրբաթօրյա նամազից հետո տեղի ունեցած բազմամարդ հանրահավաքը, որի մասնակիցները պահանջում էին երկու բան՝ երկրում իրականացնել քաղաքական ու տնտեսական բարեփոխումներ եւ չեղյալ հայտարարել 1994թ. Իսրայելի հետ կնքված խաղաղության համաձայնագիրը: Իսկ հունիսի 12-ին՝ իր գահակալության տասներկուամյակի կապակցությամբ ունեցած ելույթի ժամանակ Չորդանանի թագավոր Աբդուլահը խոստացավ, որ երկրի ապագա կառավարությունները կծեւավորվեն խորհրդարանական ընտրությունների արդյունքում:

⁵ Ուշագրավ է այն փաստը, որ մայիսի 14-ին՝ Իսրայելի անկախության հերթական տարեդարձի կապակցությամբ, Անկարայում իսրայելական դեսպանատանը կազմակերպված տոնական միջոցառմանը ներկա չէր ո՛չ իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության, ո՛չ էլ թուրքական զինված ուժերի որեւէ բարձրաստիճան ներկայացուցիչ:

⁶ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն հարցը քննարկելու համար հատուկ մեկնեց Միացյալ Նահանգներ, հանդիպեց ԱՄՆ նախագահի, փոխնախագահի հետ, ունեցավ իր հայտնի ելույթը ԱՄՆ Կոնգրեսի զույգ պալատների առջև՝ հայտարարելով, թե Իսրայելը չի վերադառնա 1967թ. սահմաններին, քանի որ դրանք հնարավոր չէ պաշտպանել, ինչն էլ կվտանգի հրեական պետության գոյությունը, եւ վերադառնալուց հետո հայտարարեց, թե Իսրայելը չի կարողանա կանխել սեպտեմբերին ՄԱԿ-ում Պաղեստինի ճանաչումը: Մյուս կողմից, Բարաք Օբամայի նախընտրական շտաբի ղեկավար Ջիմ Մեսինայի ներկայացմամբ, հրեական ժազմամբ ամերիկացի մի շարք մեծահարուստ գործիչներ՝ ԱՄՆ Պենոկրատական կուսակցության համակիրներ, նշել են, թե Օբամայի մերձավորարեւելյան նոր քաղաքականության պատճառով իրենք դադարեցնում են նախընտրական շտաբին հասցեագրված ֆինանսավորումը:

ԱՄՆ – ՌՈՒՍԱՍՏԱՆ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Սթիվեն Սեստանովիչ

Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդևը եւ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Դովիլում կայացած «Մեծ ութնյակի» գագաթաժողովի շրջանակում անցկացված հանդիպման ընթացքում քննարկել են երկու երկրների միջև հակահրթիռային պաշտպանության խնդրի շուրջ առկա տարածայնությունները: Հանդիպման վերաբերյալ առկա տեղեկատվությունը հիմք է տալիս ենթադրելու, որ Ռուսաստանը պատրաստ է որոշակի փոխզիջումների գնալ հակահրթիռային պաշտպանության հարցում, միեւնույն ժամանակ ռուսները բավականին զգուշորեն են վերաբերվում ցանկացած խնդրի, որը նրանց հիշեցնում է Ռեյգանի վարչակազմի օրոք առաջ քաշված «Աստղային պատերազմների» ծրագիրը, ինչը միտված էր չեզոքացնելու Ռուսաստանի միջուկային զինանոցի զսպիչ դերակատարությունը: Դովիլում կայացած հանդիպման օրակարգում էր նաեւ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը Ռուսաստանի անդամակցության խնդիրը: Այս հարցի վերաբերյալ որեւէ առաջընթաց չի սպասվում, քանի դեռ չեն կարգավորվել 2008թ. հակամարտությունից հետո ի հայտ եկած ռուս-վրացական խնդիրները:

Դովիլում կայացած Օբամա-Մեդվեդևի հանդիպման օրակարգում ընդգրկված էին երեք հիմնական խնդիրներ: Դրանցից առաջինը վերաբերում էր Մերձավոր Արեւելքում ստեղծված իրավիճակին, մասնավորապես՝ Իրանի եւ Լիբիայի խնդիրներին: Հանդիպումից հետո «Մեծ ութնյակի» գագաթաժողովի շրջանակում Մեդվեդևը հայտարարեց, որ Լիբիայի ղեկավար Քադաֆին պետք է հեռանա:

Ինչ վերաբերում է Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու շուրջ անվերջ ընթացող բանակցություններին, ապա հանդիպման արդյունքում որեւէ լուծում ի հայտ չի եկել: Օբամայի վարչակազմի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը հանդիպումից հետո հայտարարել է, որ այս հարցում դժվարությունները պահպանվել են, եւ դրանցից հիմնականը Վրաստանի խնդիրն է: Վրաստանը, ինչպես եւ Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամ ցանկացած այլ պետություն, պետք է կողմ քվեարկի Ռուսաստանի անդամակցությանը: Վրաստանը խնդիրներ ունի Ռուսաստանի հետ, քանի որ վերջինս 2008թ. ռուս-վրացական կարճատեւ հակամարտության հետեւանքով փաստորեն օկուպացրել է Վրաստանի երկու շրջանները՝ Հարավային Օսիան եւ

Աբխազիան: Վրաստանն առաջարկում է որոշակի փոփոխություններ կատարել այդ երկու շրջանների եւ Ռուսաստանի միջեւ սահմանի հատման գործող կարգում՝ պնդելով, որ սահմանային անցակետերում պետք է լինեն կամ վրացի պաշտոնյաներ, կամ առնվազն միջազգային դիտորդներ: Սակայն մինչ այժմ ռուսները որեւէ ակնարկ չեն արել, որ այս խնդրում պատրաստ են որոշակի զիջումներ կատարել: Սակայն խնդիրն այստեղ միայն Վրաստանի դիրքորոշումը չէ: ԱՄՆ-ը հայտարարել է, որ թույլ չի տա Ռուսաստանի անդամակցության հարցի քննարկում Առեւտրի համաշխարհային կազմակերպության Գլխավոր խորհրդում, քանի դեռ Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ առկա խնդիրները չեն կարգավորվել:

Հանդիպման ընթացքում քննարկված երրորդ խնդիրը, որտեղ կարծես թե հնարավոր է որոշակի առաջընթացի արձանագրում, հակահրթիռային պաշտպանության հարցն է: Ամերիկյան կողմը հայտարարել է, որ «նոր ազդանշան է» ստացել հակահրթիռային պաշտպանության խնդրում համագործակցության հնարավորության վերաբերյալ՝ նշելով, որ Ռուսաստանը պատրաստ է որոշակի քայլեր ձեռնարկել, որպեսզի այս խնդիրը չարգելակի կողմերի միջեւ սկսված «վերագործարկման» գործընթացը: Ամերիկյան կողմն ակնարկել է, որ չի համաձայնի որեւէ առաջարկի, որը կարող է սահմանափակել ամերիկյան հակահրթիռային պաշտպանության հնարավորությունները՝ միաժամանակ շեշտելով, որ ցանկանում է համագործակցել Ռուսաստանի հետ: Օբամայի վարչակազմի ներկայացուցիչները նշում են, որ Ռուսաստանը պետք է համաձայնվի մտնել «արդեն գոյություն ունեցող վրանի տակ», ինչը հնարավորություն կտա ռուսներին համոզվել, որ ԱՄՆ-ի կողմից ստեղծվող հակահրթիռային պաշտպանության համակարգը չի սպառնում Ռուսաստանի շահերին:

ԱՄՆ-ը ցանկանում է ունենալ այնպիսի համակարգ, որի աշխատանքը կախված չի լինի Ռուսաստանի համաձայնությունից կամ անհամաձայնությունից. այն ի վիճակի կլինի կատարել իր առջեւ դրված բոլոր խնդիրները նույնիսկ այն դեպքում, եթե ռուսները վերջին պահին որոշեն հրաժարվել ԱՄՆ-ի հետ համագործակցությունից: Մինչդեռ ռուսները ցանկանում են ներգրավվել այնպիսի համակարգում, որտեղ նրանք ազդեցիկ դերակատարություն կունենան որոշումների ընդունման գործընթացում: Սա, բնականաբար, ընդունելի չէ ՆԱՏՕ-ի համար: Ռուսաստանը չի կարող վետոյի իրավունք ստանալ ՆԱՏՕ-ի կողմից ստեղծված եւ ՆԱՏՕ-ի երկրների պաշտպանության համար նախատեսված հակահրթիռային պաշտպանության համակարգում: Հետեւաբար, ռուսներն այս գործընթացում պետք է ներգրավվեն ՆԱՏՕ-ի անդամ երկրներից տարբերվող պայմաններով: Հիմնական խնդիրը վերաբերում է այդ պայմանների էությանը:

Հակահրթիռային պաշտպանության համակարգի վերաբերյալ Ռուսաստանի դիրքորոշման մեղմացման գործընթացը մեկնարկել է 2010թ. աշնանը: Ամերիկյան պաշտոնյաները նշում են, որ Մեդվեդեւը բավականին համարձակ դիրքորոշում է արտահայտել անցյալ տարի Լիսաբոնում անցկացված ՆԱՏՕ գագաթաժողովում, ինչն ընկալվել է որպես Ռուսաստանի պատրաստակամություն՝ ներգրավվել այս գործընթացում (դրանից դուրս մնալու փոխարեն): Միաժամանակ հարկ է նշել, որ այս խնդիրը ռուս-ամերիկյան հարաբերությունների օրակարգում է արդեն քսանհինգ տարի, եւ Ռուսաստանի մի շարք քաղաքական գործիչներ ու անվտանգության համակարգի պաշտոնյաներ բավականին կոշտ դիրքորոշում ունեն այս հարցում: Ռուսաստանի անվտանգության համակարգի ներկայացուցիչները թերահավատությամբ են վերաբերվում ցանկացած խնդրի, որը նրանց հիշեցնում է «սառը պատերազմին» բնորոշ Ռուսաստանի միջուկային զինանոցի զսպիչ դերի չեզոքացման փորձերը: Ամերիկյան կողմը պնդում է, որ անկախ իրենց ցանկությունից եւ մտադրությունից, առաջարկվող հակահրթիռային պաշտպանության համակարգը նույնիսկ տեսականորեն չի կարող չեզոքացնել Ռուսաստանի միջուկային զինանոցի զսպիչ դերը, սակայն ռուսներն էլ իրենց հերթին նշում են, որ ոչ մի երաշխիք չկա, որ տասը տարի անց ամերիկյան համակարգը նոր զարգացում չի ունենա:

Հակահրթիռային պաշտպանության խնդրում զարգացումների վրա որոշակի ազդեցություն կարող են ունենալ նաեւ Ռուսաստանի ներքաղաքական զարգացումները: Առայժմ որեւէ հստակություն չկա այն հարցի շուրջ, թե հաջորդ տարի սպասվող նախագահական ընտրություններում ում թեկնածությունը կառաջադրի իշխող «Միասնական Ռուսաստան» կուսակցությունը: Շատ փորձագետներ գտնում են, որ վարչապետ Պուտինը դեռեւս վերջնական որոշում չի կայացրել այս հարցում, միաժամանակ նրանք գտնում են, որ այս հարցում վճռորոշ է լինելու հենց Պուտինի դիրքորոշումը: Ինչ վերաբերում է ամերիկյան կողմին, ապա Օբամայի վարչակազմին լիովին բավարարում է Օբամայի եւ Մեդվեդեւի միջեւ ձեւավորված հարաբերությունների մակարդակը, եւ վարչակազմը որոշակի հուսախաբություն կապրի, եթե ստիպված լինի հարաբերությունները շարունակել Պուտինի հետ:

Միեւնույն ժամանակ, հարկ է նշել, որ ներկայումս Պուտինն ու Մեդվեդեւը զրեթե նույն վարկանիշն ունեն, չնայած Մեդվեդեւը մի փոքր զիջում է Պուտինին: Թե՛ Արեւմտյան, թե՛ ռուսական փորձագետները սպասում են այն պահին, երբ Մեդվեդեւն առաջ կանցնի Պուտինից, սակայն մինչ այժմ նման զարգացում չի արձանագրվել: Եթե Պուտինի վարկանիշն անկում է ապրում, ապա նույնն է տեղի ունենում նաեւ Մեդվեդեւի հետ:

Ինչ վերաբերում է խորհրդարանական ընտրություններին, ապա գործող խորհրդարանում «Միասնական Ռուսաստան» կուսակցությունը տիրապետում է ձայների ավելի քան երկու երրորդին, ինչը հնարավորություն է տալիս նրան լիակատար վերահսկողություն հաստատել խորհրդարանի վրա եւ փաստորեն զրկել այդ մարմնին որոշումների ընդունման գործընթացում որեւէ դերակատարությունից: Որոշ վերլուծաբաններ գտնում են, որ «Միասնական Ռուսաստան» կուսակցությունը լավագույն գործիքը չէ առկա ստատուս-քվոն պահպանելու համար: Սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս, որ այդ կուսակցության վարկանիշը մի փոքր անկում է ապրել, միաժամանակ «Միասնական Ռուսաստանը» ոչ շատ բարձր արդյունքներ է ցույց տվել մի շարք մարզերում անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում: Պուտինը վերջերս հայտարարել է նոր կառույցի՝ «Ժողովրդական ճակատի» ստեղծման մասին, որի հիմնական նպատակն է ստանալ կենտրոնամետ այն զանգվածի ձայները, որն այնքան էլ հակված չէ քվեարկել «Միասնական Ռուսաստան» կուսակցության օգտին, եւ միեւնույն ժամանակ խորհրդարանական ընտրությունների ընթացքում այլ կուսակցությունների օգտին քվեարկած մարդկանց ձայները նախագահական ընտրություններում ուղղել Պուտինի կողմը: Սակայն հարկ է նշել, որ «Ժողովրդական ճակատի» հեռանկարը մի փոքր անորոշ է:

Ընդդիմադիր ուժերի մի մասին առաջնորդում են նախկին վարչապետ Միխայիլ Կասյանովը եւ նախկին փոխվարչապետ Բորիս Նեմցովը: Ընդդիմության այս հատվածը փորձում է գրանցել նոր ստեղծված «Ժողովրդի ազատություն» կուսակցությունը: Նրանք փորձում են օժանդակություն ստանալ միջազգային կազմակերպություններից, այդ թվում ԵԱՀԿ-ից, ինչպես նաեւ ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչներից՝ կուսակցության գրանցումն ապահովելու խնդրում: Սակայն Ռուսաստանի իշխանություններն էական բարդություններ են ստեղծել կուսակցության գրանցման համար: Միեւնույն ժամանակ, փորձեր են կատարվում ընդդիմություն ձեւավորել գործող համակարգի ներսում՝ օլիգարխ Միխայիլ Պրոխորովի գլխավորությամբ: Այս ծրագրի հիմնական նպատակն է աջակցություն ձեւավորել «մեդվեդեւիզմի» համար ընդդեմ «պուտինիզմի»:

Արտաքին հարաբերությունների խորհուրդ

Հունիս, 2011

Անգլերենից թարգմանեց
Բենիամին Պողոսյանը

TERRA AMERICANA-Ն ԿԻՔԵՐՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ Լեռնիդ Սավին

2011թ. մայիսի 16-ին Վաշինգտոնն առաջին անգամ հայտարարեց Միացյալ Նահանգների կողմից կիբերանվտանգության ռազմավարության ընդունման մասին: Ռազմավարության հեղինակներից է ԱՄՆ պաշտպանության փոխնախարար Ուիլյամ Լինը, որի «Պենտագոնի կիբերռազմավարությունը» հոդվածն արժանացել է ամերիկյան էքսպանսիոնիզմի մանիֆեստի համբավին:

Ռազմավարության շնորհանդեսին Յիլարի Քլինթոնը, վերամբարձ հռետորությունը զուգակցելով ժողովրդավարության տարածման ԱՄՆ առաքելության մասին ցուցումների հետ, հայտարարեց. «Այն ժամանակ, երբ ինտերնետը նոր միջոցներ է առաջարկում մարդկանց կողմից իրենց քաղաքական իրավունքներն իրականացնելու համար, ինչպես մենք տեսանք վերջին ամիսներին, նա կառավարություններին այլախոհությունը ճնշելու նոր գործիքներ է տալիս: Այն ժամանակ, երբ ինտերնետը ստեղծում է տնտեսական նոր հնարավորություններ, նա հանցագործների առջև անձնական տվյալների եւ մտավոր սեփականության գողության նոր հորիզոններ է բացում: Ու թեև ինտերնետը կառավարություններին եւ ժողովուրդներին սահմանների վրայով առավել սերտ համագործակցության հնարավորություն է տալիս, նա հակամարտության համար նոր հող է հանդիսանում, երբ պետությունները կամ այլ սուբյեկտները կանխամտածված կերպով խաթարում են ցանցերի աշխատանքը, կամ ահաբեկիչներն ինտերնետն օգտագործում են գրոհներ կազմակերպելու համար»:

Յոչակվեցին նոր ռազմավարության հիմնադրույթները.

– դիվանագիտության, պաշտպանության եւ զարգացման մեթոդները զուգորդել այնպես, որպեսզի ողջ աշխարհում կիբերտարածությունը բաց լինի համատեղ ինովացիաների համար, դառնա անվտանգ եւ հուսալի,

– ապահովել հնարավորինս մեծ թվով երկրների հասանելիությունը կիբերտարածության տնտեսական, սոցիալական, քաղաքական առավելություններին,

– ընդարձակել փոխկապակցված աշխարհի առավելությունները՝ առաջարկելով ԱՄՆ տեխնիկական պաշարներն ու փորձաքննությունը, օգնելով ստեղծել եւ անվտանգ դարձնել թվային համակարգերը,

– պաշտպանել սեփական ցանցերն ահաբեկիչներից, կիբերհանցագործներից, այլ պետություններից, հակադարձել թշնամական գործողություններին կիբերտարածությունում:

Հ.Քլինթոնը հայտարարեց, որ Միացյալ Նահանգներն իրեն իրավունք է վերապահում օգտագործել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դիվանագիտական, տեղեկատվական, ռազմական եւ տնտեսական, երկրի, նրա դաշնակիցների ու գործընկերների պաշտպանության համար՝ ձգտելով դրանում հնարավորինս ապահովել միջազգային լայն աջակցություն: Ուիլյամ Լինն ավելացրեց, թե ամերիկացի զինվորականների դերն իրենց ցանցերի անվտանգության պահպանման գործում առավել մանրամասնորեն կշարադրվի Պենտագոնի՝ կիբերտարածությունում գործողությունների ապագա ռազմավարության մեջ:

Նոր ռազմավարության գերխնդիրն է՝ մյուս երկրներին պարտադրել կիբերտարածությունում խաղի իր կանոնները՝ հենվելով ամեն տեսակի «twitter-հեղափոխությունների» համար պայմանների ստեղծման եւ «ժողովրդավարության առաջխաղացման» դրոշի ներքո Վաշինգտոնին անհաճո վարչակարգերի տապալման վրա:

Այդ կապակցությամբ ծագում է երկու խնդիր: Առաջինը կապված է ինտերնետում միջազգային վարքականոնի հետ:

Ս.թ. ապրիլի վերջին Գերմանիայում տեղի ունեցավ տեղեկատվական անվտանգության հարցերով միջազգային համաժողով, որտեղ Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Գերմանիայից, Հնդկաստանից, Չինաստանից ու Ֆրանսիայից դիվանագետները, զինվորականները եւ գործարարները փորձեցին ձեւակերպել կիբերտարածությունում գործողությունների հիմնական կանոնները: Ռուսական կողմն առաջարկեց մշակել այդ ոլորտում վարքի համապարփակ կանոնների ժողովածու: «Կիբերվարքականոնի նախաձեռնողները կիբերտարածությունը (իսկ նրանում, ինտերնետից բացի, մտնում են ցանցերն ու սերվերները, ծրագրաշարերը եւ շատ այլ բաներ) համեմատում են տիեզերքի հետ, որից օգտվելու կանոնները կարգավորվում են մի շարք միջազգային համաձայնագրերով եւ, մասնավորապես, ՄԱԿ բանաձեւերով»: Սակայն, ինչպես նշվեց համաժողովում, ԱՄՆ-ը հազիվ թե գնա իրավահավասար համաձայնագրի, քանզի հանդիսանում է ամենահզոր կիբերտերությունը, եւ մյուս

երկրների՝ կիբերմիջամտությունից իրենց ապահովելու փորձերն (թաքուն, թե անթաքույց) ամերիկացիները կորակեն իբրև «իրավունքների եւ ազատությունների ոտնահարում»։ Օրինակ կարող է ծառայել Չինաստանը։

Չինաստանում արդյունավետորեն մաղում են անցանկալի տեղեկատվական հոսքերը՝ ներառյալ պոռնոգրաֆիան եւ հակապետական քարոզչությունը։ Չինաստանն ինտերնետի ազգային հատվածներում լրացուցիչ սահմանափակումներ մտցնելու պետության իրավունքի պահպանման անսասան կողմնակից է։ Վաշինգտոնը դրան արձագանքում է նրանով, որ Չինաստանին մշտապես մեղադրում է կիբերլրտեսության եւ կիբերհարձակումների մեջ։ Նույնիսկ 2008թ., երբ ԱՄՆ նախագահի երկու թեկնածուների՝ Օբամայի ու Մակքեյնի համակարգիչները «կոտրել» էին, կասկածն ընկավ չինացիների վրա։

Երկրորդ խնդիրը հնարավոր սպառնալիքների մասին տեղեկատվության կանխամտածված խեղաթյուրումն է ԱՄՆ կառավարության կողմից։ Ամերիկացի վարչարարների ու զինվորականների կողմից մշտապես կիբերպաշտպանության ուժեղացման կոչեր են հնչում՝ կապված ԱՄՆ ողջ ենթակառուցվածքի խոցելիության հետ։ Դրա հետեւում նկատվում է մի կողմից՝ Պենտագոնի ձգտումն իրեն վերապահելու ռազմական ուժի կիրառման իրավունքը երեւակայական «ահաբեկիչների» դեմ, որոնք իբրև գործում են այն երկրից, որը նշված է որպես «ժողովրդավարացնողների» հերթական զոհ, մյուս կողմից՝ ռազմարդյունաբերական խմբերի լոբբիստական հնարքները, որոնք մրցակցում են պետբյուջեի համեղ պատառների համար պայքարում։

ԱՄՆ-ում ճանաչված լրագրող, The New Yorker հանդեսի տեսաբան, Պուլիտցերովյան մրցանակի դափնեկիր Սեյմուր Յերշը 2010թ. նոյեմբերին «Օնլայն սպառնալիք» հոդվածում մերկացրեց կիբերսպառնալիքների մասին մի շարք առասպելներ։ «Ամերիկյան հետախուզության եւ անվտանգության ծառայությունների ներկայացուցիչները,– գրում է Յերշը,– հիմնականում համաձայն են, որ չին զինվորականները կամ անկախ հաքերները (եթե այդպես է) տեսականորեն ընդունակ են Ամերիկայի ներսում ստեղծել քաոսի որոշակի մակարդակ։ Սակայն... այդ երկյուղները չափազանցվում են կիբերլրտեսության եւ կիբերպատերազմի միջև շփոթմունքի պատճառով։ Կիբերլրտեսությունն էլեկտրոնային փոստի թրաֆիկի, տեքստային հաղորդագրությունների, կապի այլ էլեկտրոնային միջոցների եւ կորպորատիվ տվյալների գաղտնի զավթումն է... Իսկ կիբերպատերազմը ենթադրում է օտար ցանցերի ներխուժում՝

դրանց վնասման, ապամոնտաժման եւ շարքից դուրսհանման նպատակով: Կիբերպատերազմի եւ կիբերլրտեսության միջեւ տարբերության ջնջումը ձեռնտու է գինվորական կապալառուներին...»:

Եվ այնուհետեւ. «Չկա էլեկտրականության անջատման ոչ մի փաստագրված դեպք՝ կապված կիբերհարձակման հետ: Եվ մուլտիմեդիային նկարը, որտեղ հաքերը կոճակի սեղմմամբ կարող է անջատել ողջ երկրի լույսերը, չի համապատասխանում իրականությանը: ԱՄՆ-ում ազգային էլեկտրացանց գոյություն չունի: Կան հարյուրից ավելի պետական եւ մասնավոր ընկերություններ, որոնք կառավարում են իրենց սեփական գծերը՝ առանձին համակարգչային համակարգերով եւ անվտանգության առանձին միջոցառումներով... Դա նշանակում է, որ էլեկտրականության մատակարարը, որը հայտնվել է կիբերհարձակման տակ, հնարավորություն կունենա օգտվել մոտակա համակարգերի էներգիայից»:

Այնուհետեւ Սեյմուր Չերչը վկայակոչում է գիտնական-համակարգչագետ Բրյուս Շնայերին, որը հայտարարել է, որ չի պատկերացնում, թե շատերին սարսափեցրած Staxnet վիրուսը նոր սպառնալիք կարող է ստեղծել: «Անշուշտ, ոչ մի փաստացի ապացույց չկա, թե որդն ուղղված է եղել Իրանի կան էլի որեւէ մեկի դեմ: Միաժամանակ, այն շատ լավ է մշակված ու նկարագրված եւ համապատասխանում է նրանց, ովքեր ցանկանում են հավատալ, որ կիբերպատերազմ է գնում»: ԱՄՆ Ազգային անվտանգության գործակալության (ԱԱԳ) նախկին օպերատիվ աշխատակցի խոսքերով, որին մեջբերում է Չերչը, 1991թ. Իրաքի վրա հարձակման ժամանակ ԱԱԳ-ը կիբերլրտեսության գծով անգին փորձ ձեռք բերեց: Այդ մեթոդները կատարելագործվեցին 1999թ. Չարավսլավիան ռմբակոծելու ընթացքում, իսկ հետո՝ 2003թ. Իրաքի վրա հարձակման ժամանակ: «Ինչ էլ որ մեր դեմ չինացիները հնարեն, մենք կարող ենք անել անհամեմատ ավելի լավը: Մեր (ամերիկյան – *հեղ.*) հարձակողական կիբերհնարավորությունները շատ ավելի առաջադեմ են», – ասում է այդ մասնագետը:

Տեղեկատվական եւ կիբերպատերազմների հայտնի մասնագետ Մարտին Լիբիցկին, որն աշխատում է ԱՄՆ ռազմական գերատեսչությունների համար, այս հարցերում նույնպես առաջարկում է կշռադատված մոտեցում: «Կիբերհարձակման մասին պնդումը կարող է կեղծ լինել: Այնուհետեւ ծագում են հարցեր: Կարո՞ղ է, արդյոք, հատուցման գործողությունը լինել անհամարժեք: Եվ կարելի՞ է, արդյոք, խուսափել իրադարձությունների ծավալումից: Եթե անգամ որոշ դեպքերում պետք է

պատասխան միջոցները ողջունել, հակագործողություններ կարող են եւ չձեռնարկվել. ճակատամարտը, որ սկսվելու է կիբերտարածությունում, կարող է տեղափոխվել իրական աշխարհի՝ նրա համար տխուր հետեւանքներով»:

Չնայած մասնագետների սթափ թերահավատությանը եւ զգուշավորությանը, Վաշինգտոնն, ըստ երեւոյթին, ողջ ուժով ամրագրում է կիբերտարածությունում ազատ մեկնաբանությունների եւ միակողմանի գործողությունների իր իրավունքը՝ այնպես, կարծես ինտերնետը դեռ երեկ *terra incognita* (անհայտ երկիր) էր, որի վրա օրերս հանդիսավոր կերպով բարձրացրին ամերիկյան աստղաշերտավոր դրոշը:

Geopolitika.ru

18.05.2011

ԻՆՏԵՐՆԵՏ-ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ. ՌԱԶՄԱՃԱԿԱՏ ԱՌԱՆՑ ՃԱԿԱՏԱՅԻՆ ԳԾԻ Դմիտրի Սեդով

Չինաստանի բանակը պաշտոնապես հայտարարեց «ինտերնետ-պատերազմների» դարաշրջանի սկսման մասին: Հունիսի 2-ին China Youth Daily անգլիախոս թերթում հայտնվեց Չինաստանի Ռազմական գիտությունների ակադեմիայի հրապարակումը, որում ասվում է, թե զանգվածային ելույթներն արաբական երկրներում ինտերնետ-պատերազմների ժամանակաշրջանի սկիզբն են, որոնք գալիս են փոխարինելու ավանդական պատերազմներին: Հրապարակման հեղինակները ԱՄՆ-ին մեղադրում էին Արաբական Արեւելքում հենց նման պատերազմի սանձազերծման մեջ: Չին գինվորականների հայտարարությունն արվեց Պենտագոնի կողմից արտաքին հաքերային գրոհներին ռազմական ուժով պատասխանելու ռազմավարության ընդունման մասին հաղորդագրությունից մի քանի օր հետո:

Չի կարելի անտեսել չին գինվորականների մասշտաբային աշխարհաքաղաքական մտածողությունը: Նրանք լավ են պատկերացնում այն դերը, որ այսօր հասարակության կյանքում խաղում է կառավարելի տեղեկատվությունը: Նրանց համար ինտերնետ-պատերազմը մեր աշխարհի դաժան իրականությունն է:

Տեղեկատվական տարածությունում աշխատանքի ողջ թափով հանդերձ՝ Վաշինգտոնը բոլորովին չի սիրում նրա իրական նպատակների շուրջ ծավալվել: Տասնյակ հազարավոր ամերիկյան տեղեկատվական պաշարներ եւ դրանք կառավարող հազարավոր գաղափարախոսական կենտրոններ իրենց հրամցնում են որպես լուսավորության անդաստանում տքնողների: Իրականում նրանք պլանաչափորեն փոխում են ամբողջ գիտակցությունը՝ արմատավորելով գլոբալացումն ամերիկյան ձեւով: Այդ պատերազմի վարման միջոցների մեջ խտրություն չեն դնում: Հիշենք, թե 12 տարի առաջ ամերիկացիները, հաշվի չնստելով զոհերի հետ, հրթիռառմբային հարվածներ հասցրին Սերբիայի հեռուստակենտրոններին, ռադիո- եւ վերահաղորդիչ կայաններին: Դա տեղեկատվական պատերազմ էր՝ իր ծայրահեղ արտահայտմամբ, նշանավորված ամեն ոչ ամերիկյանի հանդեպ ատելությամբ:

Այն ժամանակ դա մատուցվում էր իբրև մարտական գործողությունների ընթացքում պատճառված կողմնակի վնաս: Այժմ էլ Պենտագոնը պաշտոնապես հայտարարում է. «Բոլոր նրանք, ովքեր կխոչընդոտեն մեր տեղեկատվական գործողություններին, կոչնչացվեն իրենց որջում»: Պարզ եւ հասկանալի յուրաքանչյուրին, ով կասկածում է «ամերիկյան ճշմարտությանը»:

Զինաստանում ամերիկյան ժողովրդավարական արժեքների նկատմամբ պատրանքներ չեն ստեղծում եւ հասկանում են, որ Աֆրիկայում չին-ամերիկյան շահերի բախումը նոր է սկսվում:

Դժվար թե ԱՄՆ-ը այժմ ՉԺՅ-ի հետ, բացի տեղեկատվականից, որեւէ այլ պատերազմի գնա: Ունենալով խորհրդային հասարակական գիտակցության խորտակման վիթխարի փորձը, մշտապես զարգացնելով տեղեկատվական ազդեցիկայի ուժերն ու միջոցները՝ ամերիկացիները դրանում մյուսներից շատ են առաջ անցել:

Սակայն ՉԺՅ դեկավարությունը գորբաչովյան «վերակառուցողների» խումբը չէ: Նա նվաճումներն առանց ճակատամարտի չի տա: Օրինակ բերելով զանգվածային ժողովրդական ելույթներն արաբական երկրներում, որոնք համակարգվում են ինտերնետի միջոցով, չին զինվորականները համաշխարհային ցանցը դիտում են որպես դիմակայության գլխավոր դաշտ ապագայի պատերազմում: Նրանք Մերձավոր Արեւելքի երկրներում անկարգություններն ուղղակի անվանում են ԱՄՆ գործողությունների արդյունք: «Վերջին ժամանակների ինտերնետ-տորնադոն սրընթաց անցել է ողջ աշխարհով... Նրա հետեւում կանգնած է Ամերիկայի ստվերը... Ցանցային պատերազմներում բախվելով նրան՝ ոչ մի ժողովուրդ եւ բանակ չի կարող կրավորական մնալ, այլ պետք է պատրաստվի ինտերնետ-պատերազմի ճակատամարտերին», – հավաստիացվում է հրապարակման մեջ:

Ցանցում խաղաղ գոյակցման նպատակով չին զինվորականներն առաջարկում են մտցնել «ինտերնետ-սահման» եւ «ինտերնետ-անկախություն» հասկացությունները: Այն հակասում է ԱՄՆ նոր ռազմավարությանը, որը Թունիսի ու Եգիպտոսի հեղափոխություններից հետո «ինտերնետում ազատության համար գլոբալ պայքարի» մասին ճառում ձեւակերպեց պետքարտուղար Յիլարի Բլինթոնը:

Այժմ ՉԺՅ-ում մուտքն արտասահմանյան կայքեր սահմանափակված է, ցանցի էջերը զտվում են, մուտքը միջազգային սոցիալական ցանցեր արգելված է: Մայիսի սկզբին Զինաստանում ստեղծվեց ինտերնետ-տարածության վերահսկողության հատուկ դեպարտամենտ: Ավելի շուտ

իշխանությունները երկրի ողջ տարածքում գործողության մեջ էին դրել «firewall» (հրե պարիսպ) համակարգը, որը կոչում են «Չինական հակահրդեհային մեծ պարիսպ»:

Համաշխարհային ցանցի չվերահսկվող տարածություններից եկող վտանգը լավ են հասկանում նաև մի քանի այլ երկրներում... Առաջին հերթին՝ Միացյալ Նահանգների հետ տեղեկատվական հակամարտության առաջատար Իրանում: 2011թ. Իրանում ստեղծվեց ինտերնետի գտված հատված: Մոտակա երկու տարիներին իրանցի ֆիզիկական եւ իրավաբանական անձինք միայն նոր ներքին ցանց մուտք կունենան: Իրանական իշխանությունների մտահղացմամբ, սկզբում գտված ինտերնետը պետք է լինի սովորականի հետ միասին, այնուհետեւ նոր ցանցը դուրս կմղի սովորական ինտերնետին: 2010թ. գարնանն ինտերնետի միջոցով Իրանում երիտասարդական խռովության կազմակերպման փորձերն իրանական իշխանությունների համար զուր չանցան. նրանք օպերատիվ կերպով արտասահմանյան տեղեկատվական ագրեսիայից պաշտպանություն են ստեղծում:

Մի քանի տարի առաջ պաշտոնապես տեղեկատվական պատերազմի դոկտորին ընդունեց Բրազիլիայի բանակը: Բրազիլական բանակում մշակվեց ռազմական դրության դեպքում կիբերտարածությունում մարտական գործողությունների ծրագիրը: Ծրագիրը նախատեսում է պաշտպանության ու հարձակման միջոցառումներ ամենաառաջավոր միջոցների օգնությամբ: Սկզբունքորեն այդ ծրագիրը ոչնչով չի տարբերվում զորատեսակների համար մարտական հրահանգներից: Ներկայումս տեղեկատվական զենքի մարտունակության բարձրացման համար անցկացվում է Բրազիլիայի բանակի լրագինում հատուկ տեխնիկայով:

Տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգերի իսպանական արտադրող Panda Security-ն հայտարարեց բրազիլացի զինվորականների հետ համապատասխան համաձայնագրի կնքման մասին: Panda-ն ապահովելու է կիբերահաբեկչության դեմ պայքարի եւ տեղեկատվական պատերազմների վարման համար պատասխանատու բանակային մասնագետների ուսուցումը եւ իրականացնելու է նորագույն ծրագրային ապահովության համակարգերի մատակարարումներ՝ բանակային հրամանատարության 37,5 հազ. համակարգիչները ծրագրային ապահովման բոլոր վնասաբեր տարատեսակներից, թիրախային գրոհներից եւ ինտերնետ-սպառնալիքներից պաշտպանելու համար:

Նախատեսված է համագործակցություն բրազիլական բանակի հաղորդակցության կենտրոնի եւ PandaLabs հակավիրուսային լաբորա-

տորիայի հետ: Համագործակցության շրջանակներում անցկացվելու է կիրքերհանցագործությունների հետաքննման ոլորտի փորձագետների համատեղ պատրաստում եւ վնասաբեր ծրագրերի նմուշների փոխանակում: Panda-ն պարտավորություն է վերցրել 24-ժամյա ժամկետում ապահովել Բրազիլիային սպառնացող վնասաբեր կողերի դասակարգումը եւ համապատասխան օպերատիվ հակադարձումը: Բանակն ունի համակարգիչների շուրջ 60 հազարանոց համակազմ, եւ արդեն այսօր նրա տեղեկատվական տեխնոլոգիաների 12 կենտրոններում օրական միջինը 100 գրոհ է նախաձեռնվում: Խիստ մասնագիտական խնդիրներից բացի, բրազիլացի զինվորականները հետեւում են իրենց ուշադրությանը հասանելի բոլոր տեղեկատվական գործողություններին, որոնք կարող են խախտել քաղաքական հավասարակշռությունն իրենց հետաքրքրությունների գոտում:

Անշուշտ, ռազմական նպատակների համար բանակային ծրագրերը չեն կարող հանրամատչելի ցանցերի միջոցով քաղաքական ապակայունացումից երաշխիք ծառայել, սակայն նրանք գրանցում են գործերի վիճակը եւ ցանկացած պահ կարող են քաղաքական ղեկավարությանը երկրի դեմ անցկացվող քայքայիչ տեղեկատվական գործողությունների մասին անաչառ տվյալներ ներկայացնել, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ հակագրոհել հակառակորդին:

ՌԴ-ում կա «Տեղեկատվության, տեղեկատվական տեխնոլոգիաների եւ տեղեկատվության պաշտպանության մասին» օրենք, որը ցանկացած ուժի ինտերնետում աշխատանքի լիակատար ազատություն է տալիս: Ս.թ. մարտին Դումայում վիրտուալ տարածությունում ակտիվության կանոնակարգման մասին նոր օրենքի նախագիծ ներկայացվեց: Սակայն քննարկումն, ըստ սովորության, անպտուղ ստացվեց: Շահագրգիռ շատ անձանց ջանքերով օրինագծի մշակումը սաբոտաժի է ենթարկվում: Այն նման է «վերակառուցման» իրավիճակին, երբ արտասահմանից ԽՍՀՄ հորդացին տեղեկատվության հեղեղներ, իսկ խորհրդային լրատվամիջոցները «կուսակցության գրաքննությունից» ազատվելու պատրվակով հեռացան տեղեկատվական հակամարտության ասպարեզից: Այսօր իշխանության անարդյունավետությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ Ռուսաստանի քաղաքացիների անհատական եւ զանգվածային գիտակցության վրա ազդում է ցանկացած տեղեկատվական հոսք: Կրկին ստացվում է պարոդիա ԱՄՆ-ի վրա՝ լրատվամիջոցների վարքի այնտեղի կանոնների պատճենման փորձով: Սակայն այնտեղ ցանկացած զանգվածային լրատվության միջոցի թուլլատրվում է

ազատություն, որովհետեւ իշխանական վերնախավին վերահսկելի լրատվամիջոցներն, անշուշտ, գերակշռում են: Մնացած «թույլատրվածները» նրանց հետ պայքարում անօգնական են: Արդյունքում՝ ամերիկյան հասարակական գիտակցությունն ընդունում է այն ձեւերը, որոնք անհրաժեշտ են իշխող դասին:

Իսկ Ռուսաստանում, չնայած կարծես թե ձեռնարկված միջոցներին, լրատվամիջոցներում տիրում է գերիշխող եւ հստակ արտահայտված պետական գծի լիակատար բացակայություն, խառնախոսություն եւ «արտահայտությունների ազատություն»՝ տեղեկատվական դաշտում ամենաթողության ոգով, որտեղ բույն են դրել ամենատարբեր ռեսուրսներ, այդ թվում նաեւ հասարակական առողջությունը քայքայողներ, ռուսաստայացություն սերմանողներ:

Որպեսզի Ռուսաստանին բաժին չհասնի Արաբական Արեւելքի հայտնի երկրների ճակատագիրը, որպեսզի նա քառորդ դարի ընթացքում երկրորդ անգամ անձնատուր չլինի տեղեկատվական պատերազմում՝ դառնալով քայքայիչ գործողությունների զոհ, անհրաժեշտ է ինտերնետի ազգային հատվածում շտապ մտցնել կարգավորող մեխանիզմներ:

fondsk.ru
04.06.2011

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սուրեն Սարյան

ԳԼՈՒԲԱԼ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՊԱԳԱՆ 1

Սեւակ Սարուխանյան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ 8

Հայկ Գաբրիելյան

ՍԻՐԻԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ 13

Ռուբեն Մելքոնյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՉԵՐՔԵՁՆԵՐԻ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ . . . 21

Արտաշես Տեր-Հարությունյան

**ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ
ԵՎ ԻՍՐԱՅԵԼԸ 25**

Աթիվեն Սեստանովիչ

ԱՄՆ – ՌՈՒՍԱՍՏԱՆ ՋԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 31

Լեոնիդ Սավին

**TERRA AMERICANA-Ն
ԿԻԲԵՐՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ 35**

Դմիտրի Սեդով

**ԻՆՏԵՐՆԵՏ-ՊԱՏԵՐԱՁՄՆԵՐ.
ՌԱՁՄԱՃԱԿԱՏ ԱՌԱՆՑ ՃԱԿԱՏԱՅԻՆ ԳԾԻ 40**

*Շապիկին պատկերված է
տեսարան Արցախից (Հաղորուք).
հեռվում՝ Դիզափայտ լեռը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: